



ՍՅՈՒՆԻՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

11-13 նոյեմբերի, 2013

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՀՀ Սյունիքի
մարզպետարան



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
1. ԳԻՆԵՀՈՒՄՔԻ, ՊՏՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ԹՈՐԱԾ ՕՂԻՆԵՐԻ ՀՈՒՄՔԻ ՍԹԵՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.....	10
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ.....	11
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....	12
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ.....	12
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ.....	12
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	14
2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ.....	15
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ.....	15
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....	16
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ.....	16
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍՔԸ.....	16
ՀՈՒՄՔ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ.....	19
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ.....	19
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ.....	20
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	21
3 ՍԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՂՍԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՍՐԳԵՐԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԹԵՐՄԱՆ, ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ.....	22
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ.....	23
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ.....	24
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....	24
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ.....	25
ՀՈՒՄՔ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ.....	26
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ.....	26
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	28
4. ՉՐԵՐԻ ԱՐՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՉՐԱՆՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ.....	29
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ.....	30
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....	30
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ.....	31
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	32
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ.....	32
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ.....	32
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	33
5. ՎԱՅՐԻ ԹԵՅԱԲՈՒՅՄԵՐԻ ԵՎ ԴԵՂԱԲՈՒՅՄԵՐԻ ՍԹԵՐՈՒՄ ԵՎ ՍՇԱԿՈՒՄ.....	34
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ.....	34
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....	35
ԱՂՅՈՒՍԱԿ 5.4.....	36
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	36
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ.....	36
ԾՐԱԳԻՐԸ ՆՊԱՍՏԵԼՈՒ Է.....	36
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ.....	37
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	38

6. ՎԱՂԱՀԱՍ ԾԻՐԱՆԻ ԵՎ ԴԵՂՁԻ, ԿԻՎԻԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ	39
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	40
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	40
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	41
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ	41
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ	42
ԵԿԱՍՈՒՏ, ԾԱԽՍԵՐ	42
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ	42
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	43
7. ՈՁԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԱՓԵՐԻ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ	44
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	44
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	45
ԵԿԱՍՈՒՏ ԾԱԽՍԵՐ	46
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ	46
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ	47
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	48
8. ԲԱՆՋԱՐԱԲՈՍԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐԻ ԵՎ ԾԱՂԿԻ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ	49
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	49
ԾԱՂԿԱՅԻՆ ՋԵՐՄՈՑՆԵՐ	49
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	50
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ	50
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	51
ԵԿԱՍՈՒՏ ԾԱԽՍԵՐ	51
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ	52
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	52
9. ՊԱՀԱԾՈՑԱՑՄԱՆ ՓՈՔԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ	54
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	54
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	55
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ	57
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ	57
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	59
ԱՂՅՈՒՍԱԿ 9.6	59
10. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ, ԻՆՏԵՆՍԻՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐԴՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ	60
ԻՆՏԵՆՍԻՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ	62
ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	64
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	64
ԱՇԽԱՏՈՒԺ ԵՎ ՀՈՒՄՔ	69
ՀՈՒՄՔ ԵՎ ՊԱՀԵՍԱՄԱՍԵՐ	70
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ	70
ՈՒՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ	71
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՍՊԵՐ	72
ԱՇԽԱՏՈՒԺ	72
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ - ՄԻԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՎ	73
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ - ՄԱԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՎ	74

ՆԱԽԱԲԱՆ

Սյունիքի մարզը մեծ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության տնտեսության համար և ապահովում է դրա զարգացման ու կայուն առաջընթացի կարևորագույն հիմքերը: Մարզային զարգացման տեսլականը դիտարկելիս, կարևոր է ընդունել, որ Սյունիքի մարզը յուրահատուկ է և ներդրումային համաժողովի այս Ուղեցույցը մշակվել է հենց այդ առանձնահատկությունների հիման վրա և այն լույսի ներքո, որ Սյունիքի մարզը կարիք ունի արդյունավետ կերպով արձագանքելու իրեն ներհատուկ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական հնարավորություններին և մարտահրավերներին:

Ընդհանրապես երկրի մաշտաբով մարզերի համաչափ և արդյունավտ զարգացումը համարվում է տնտեսական առաջընթացի կարևորագույն գրավականը և այդ տեսակետից



Սյունիքի մարզի տնտեսական և սոցիալական հիմնախդիրների արմատական լուծումը կարևոր դեր է կատարում Հայաստանի Հանրապետության համար նաև քաղաքական և ռազմավարական տեսանկյուններից: Այն ուղղակիորեն ազդեցություն է ունենում մարզի բնակչության եկամուտների, զբաղվածության, ներդրումների, էկոլոգիական հավասարակշռության, աշխատանքային պայմանների և վերջապես մարզի բնակչության բարեկեցության վրա: Տնտեսական զարգացման խթանումը, ներդրումների խրախուսումն ու նոր գործարար նախագծերի իրագործումը կունենա բազմապատկիչի էֆֆեկտ նաև հարակից մարզերի բնակչության վրա և երկրի տնտեսության վրա ընդհանրապես:

Կազմակերպող կողմը մանրամասնորեն ուսումնասիրել, վերլուծել և վերհանել է մարզի զարգացման հնարավորությունները, համակողմանի քննարկել և ընդհանուր եզրահանգման է եկել այն բանում, որ տվյալ համաժողովի շրջանակներում առավել իրատեսական և արդյունավետ է համարվում Ուղեցույցում ներկայացված 10 ներդրումային ծրագրերի վրա ուշադրության կենտրոնացումը, որոնցում առկա է *դրական տնտեսական էֆֆեկտի և համակարգաստեղծ բաղադրիչների լիարժեք դրսևորվելու ամենամեծ ներուժն ու կարողությունները:*

Կազմակերպող կողմը նաև վստահ է, որ Սյունիքի մարզի Տնտեսական Զարգացման և Ներդրումային համաժողովի շրջանակներում ներկայացվող տվյալ Ուղեցույցը կնպաստի պոտենցիալ ներդրողների և մարզի միջև համագործակցային մոտեցումների զարգացմանը, մարզային զարգացման բազում նախաձեռնությունների խթանմանը՝ դրանով իսկ կապակցելով պետության և մասնավորի միջև բազմաբնույթ փոխշահավետ նախաձեռնությունների իրագործմանը:

Ուղեցույցը ներդրողներին ապահովում է պրակտիկ ուղենիշներով այն մասին, թե ինչպես և որ ուղղություններով է հնարավոր ինտեգրել ներդրումային նախագծի առանցքային դետեմինանտները մարզային զարգացման պլաններում և նախաձեռնություններում: Այս Ուղեցույցը մշակվել է օգնելու նախ մարզի ղեկավարությանը որոշել ուժեղ տեղային տնտեսություն կառուցելու առաջնահերթությունները, ինչպես նաև նպաստել ու զարգացնել մարզի տնտեսության զարգացման շրջանակներում արդյունավետ որոշումների կայացմանը՝ փաստերի վրա հիմնված վերլուծությունների օգտագործման միջոցով:

Մարզի զարգացման գործընթացներում ներգրավված են մի շարք մասնակիցներ՝ ներառյալ ՀՀ կառավարությունը՝ ի դեմս Սյունիքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավոր բիզնեսը, միջազգային և համայնքային տարբեր կառույցներ: Ուղեցույցը կազմվել է աջակցելու ներդրողների ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ներկայացուցիչներին և դոնոր կազմակերպություններին իրական ներգրավվածություն ունենալ մարզի զարգացման ռազմավարության իրագործմանն ու տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը՝ առկա խնդիրների, հնարավորությունների և մարտահրավերների միասնական ընկալման և աճի ապահովման հիմնական որոշիչ գործոնների կիրառման միջոցով: Կարևոր է նշել, որ այս Ուղեցույցը ընդունում է, որ ավելի լավ լուծումներ և հնարավորություններ կարող են գտնվել ապագայում, երբ զարգացման շուրջ իրական համագործակցությունը կդառնա իրողություն, և դա է պատճառը, որ այն հանդես է գալիս որպես պիլոտային նախագծի առաջին փուլ՝ հետագայում շարունակաբար կատարելագործվելու և լրամշակվելու ակնկալիքով: Վստահ ենք, որ այն կապահովի Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությամբ, գաղափարներով և ուղենիշներով, որոնք էլ հիմք կհանդիսանան Սյունիքի մարզի տնտեսական և սոցիալական զարգացման նախաձեռնությունների արդյունավետ իրականացման համար:

Համաժողովի շրջանակներում ներկայացվող պիլոտային նախագծերի մշակման հիմքում դրվել են հետևյալ կարևորագույն վեկտորները՝ որպես կարևորագույն հիմնասյուներ մարզի ամբողջական և համահարթ զարգացման համար:

Մարդկային Կապիտալ	Սոցիալական և էկոլոգիական գործոններ
<p>Բնակչության հմտությունների և զբաղվածության զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • Կրթություն և վերապատրաստում • Աշխատուժի կարողությունների զարգացում 	<p>Սոցիալական և էկոլոգիական կայունություն</p> <ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսության զարգացում • Քաղաքային ենթակառուցվածքների զարգացում • Սոցիալական և էկոլոգիական նախաձեռնություններ • Քաղաքային ծառայությունների զարգացում

Մուտք դեպի շուկաներ	Համեմատական առավելություններ և գործարար մրցունակություն
<p>Մարզի կարողությունների զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • Մարզի արտադրանքի բրենդինգ և առաջխաղացում • Ներդրումների և ֆոնդերի ներգրավում • Գործարարության խրախուսման միջոցառումներ 	<p>Սոցիալ-էկոլոգիական կայունություն</p> <ul style="list-style-type: none"> • Ֆոնդերի ներգրավում և մարզային նշանակության նախագծերի կառավարում <p>Կազմակերպական և կառավարչական կարողությունների զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • Ձեռնարկատիրության ՓՄՁ-երի զարգացում • Տեխնիկական աջակցություն և կրթական ծրագրեր • Տեխնոլոգիաների և նորարարության խրախուսում

Ներկայում Սյունիքի մարզում առանցքային գերակայություն ունեն հետևյալ տնտեսական և սոցիալ-էկոլոգիական խնդիրների լուծումները՝

- Մարզի տնտեսության դիվերսիֆիկացիա և կայուն աճի ապահովում,
- Բնակչության տնօրինվող եկամուտների աճ
- Բնակչության զբաղվածության աճ և գործարար կարողությունների զարգացում
- Արդյունաբերության ճյուղերի դիվերսիֆիկացված զարգացում
- Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակի բարձրացում և իրացման ծավալների աճ
- Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում

Ինչպես արդեն նշվեց, Ուղեցույցում առանձնացված ուղղություններն ընդհանուր առմամբ պիլոտային են և ներառում են մարզի կտրվածքով նախանշված գերակա ուղղություններ, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրներին: Տվյալ համաժողովի նպատակային թիրախներից ելնելով առանձնացվել են Սյունիքի մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի մարզի տնտեսական, սոցիալ-էկոլոգիական զարգացմանը, եկամտային և մարդկային կապիտալի կարողությունների աճին.

- ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացում
- Գյուղատնտեսության զարգացում
- Բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում

- Զբոսաշրջության զարգացում
- Մարզային և համայնքային ենթակառուցվածքների կառուցում, բարելավում

Այս համաժողովի շրջանակներում կան մի շարք շահառու կողմեր և մասնակիցներ, ովքեր կարող են էական ազդեցություն ունենալ Սյունիքի մարզի զարգացման ընդհանուր հնարավորությունների վրա: Այդ տեսակետից այս Ուղեցույցը նպատակ ունի նաև աջակցել բոլոր կարգի արդյունավետ նախաձեռնություններին, նոր նախագծերի պլանավորմանը և գործարար միջավայրի աշխուժացմանը նպաստող ցանկացած միջոցառումներին՝ ներառյալ խնդիրների համատեղ քննարկումներն և պետական ու մասնավոր հատվածների միջև բազմաշերտ համագործակցության ամրապնդումը: Վերը նշված հիմնական թիրախային ուղղություններն էլ հենց հիմք են հանդիսանում համաժողովի շրջանակներում Սյունիքի մարզում զարգացման հեռանկարների, անհրաժեշտ նախաձեռնությունների և նոր նախագծերի իրագործման նպատակով ներդրումների և դոնորների ներգրավման համար:

Առանձնահատուկ հարկ է նշել, որ գրեթե բոլոր ներդրումային ծրագրերում առկա է պետության շոշափելի մասնակցությունը, որի հիմնական և առաջնային նպատակը՝ ծրագրերի մասնակից մյուս կողմերին աջակցություն ցուցաբերել և շուկային կարևորագույն ազդակներ հաղորդելն է: Պետության մասնակցությունը նաև էապես մեծացնում է ծրագրի հաջող իրականացման հնարավորությունները՝ հետագայում համագործակցության լայն հնարավորություններ ստեղծելով համակարգաստեղծ այլ նախագծերի արդյունավետ իրականացման համար:

Այլ կեր ասած, ներդրումային ծրագրերին աջակցության պարագայում էականը ոչ թե պետության/ կառավարության ներդրումների մասնաբաժնի չափն է, այլ այն ազդակը, որ պետությունը հաղորդում է ներդրողներին իր այդ քայլով. այն է՝ իր՝ պետության պատրաստակամությունը աջակից լինելու իրենց նմանատիպ նախաձեռնություններում: Պետության դերը տվյալ ծրագրերում կբարձրացնի ծրագրի դերն ու նշանակությունը ներդրողներին խրախուսելու գործընթացում:

Հարկ է նաև նշել, որ Ծրագրերը առավել հաջողված կլինեն, եթե սերտորեն համագործակցի ոլորտով զբաղվող միջազգային և տեղական կառույցների հետ: Այսպես, Ուղեցույցում ներառված ծրագրերի շրջանակներում՝ կախված իրենց ուղղվածության և ռազմավարական նպատակներից ձեռնարկության ապագա հաջողության գործում լուրջ դերակատարում կարող են ունենալ հետևյալ միջազգային կարույցները և տեղական գործընկերները

- Գյուղատնտեսության նախարարություն
- « Ագրարարազյուղացիական միավորում» ՀԿ
- «Հայկական բերքի առաջնդման կենտրոն» (ՀԲԱԿ) ՓԲԸ
- “ՇԵՆ” ԲՀԿ
- CARD (մասնագիտական խորհրդատվություն և ֆինանսական աջակցություն),
- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն,
- Զերմոցային Ասոցիացիա
- Առևտրաարդյունաբերական պալատ (արտահանում և սերտիֆիկացում),
- Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության և այլն:



Մյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

Գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 18.5 %,
- գյուղատնտեսություն՝ 5.7 %,
- շինարարություն՝ 7 %,
- մանրածախ առևտուր՝ 1 %,
- ծառայություններ՝ 1 %:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ.-ին շահագործման է հանձնվել Կապան-Ծավ-Մեղրի ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք Կապան-Քաջարան-Մեղրի միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:



Կապան քաղաքի (մոտ 45.5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 301 կմ հեռավորության վրա) տնտեսության առաջատար ճյուղը՝ հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն մշակող արդյունաբերությունը (սննդի, կարի, ոչ հանքային շինանյութերի, ալյումինե և մետաղալիստիկ իրերի, բնափայտի, և սարքավորումների) և էլեկտրաէներգիայի արտադրությունը



Քաջարան քաղաքը (մոտ 8.1 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 327 կմ հեռավորության վրա) ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:



Գորիս քաղաքի (մոտ 23.1 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա) տնտեսության հիմնական ճյուղը արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի, սննդի արտադրությունը, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղալիստիկ իրերի, փայտե արտադրատեսակների, ինչպես նաև էլեկտրասարքավորումների արտադրությունները:



Մեղրի քաղաքը (մոտ 4800 բնակիչ, գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա) Սյունիքի մարզի հարավային քաղաքներից է, որը պետական սահմանով բաժանվում է Իրանից: Տնտեսությունում հիմնականում զարգացած է արդյունաբերությունը, մասնավորապես սննդի արդյունաբերությունը: Կան հացի, պանրի, պահածոների գործարաններ, տեղում պատրաստում են նաև յուրահատուկ գինի: Հիմնական ճյուղերից է նաև պտղագործությունն ու այգեգործությունը:



Ագարակ քաղաքը (մոտ 4800 բնակիչ, գտնվում է Երևանից 410 կմ հեռավորության վրա) փոքր արդյունաբերական քաղաք է: Ունի բնական ռեսուրսների մեծ պաշարներ, որից ամենատարածվածը պղնձամոլիբդենային հումքի առկայությունն է: Արտադրության գերիշխող ճյուղերն են լեռնահանքային արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Բնակչության մեծամասնությունը աշխատում է «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ում:



Միսիան քաղաքը (մոտ 7000 բնակիչ, հեռավորությունը Երևանից - 217կմ) գտնվում է Երևան-Արցախ, Երևան-ԻԻՀ միջպետական ավտոմայրուղուց 6-7 կմ հարավ, Որոտան գետի երկու ափերին:

1. ԳԻՆԵՀՈՒՄՔԻ, ՊՏՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ԹՈՐԱԾ ՕՂԻՆԵՐԻ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Գինեհումքի, պտղային եվ հատապտղային թորած օղիների հումքի մթերման կազմակերպում ծրագրով առաջարկվում է Սյունիքի մարզի ներքոնշյալ ենթատարածաշրջաններում հիմնել գինեհումքի մթերման, ինչպես նաև պտղային և հատապտղային տեղական թորած օղիների արտադրության կենտրոններ:

Աղյուսակ 1.1

Տարածաշրջան	Համայնքների անվանում
Գորիս	Խնձորեսկ, Խնածախ, Շինուհայր, Գորիս քաղաք
Կապան	Կապան քաղաք
Մեղրի	Շվանիձոր, Ագարակ, Լեհվազ

Տիպային մթերման կետն ըստ նախնական հաշվարկների պետք է բաղկացած լինի երկու ստորաբաժանումներից:

Առաջինը՝ գինեհումքի մթերման արտադրամասն է, որն իր մեջ ներառելու է.

- **հումքային մթերման հրապարակը**, որտեղ իրականացվելու է գինեհումքի ընդունումը, սորտավորումը, լվացումն ու չորացումը,
- **մանրացնող-մամլող բաժինը**, որտեղ տեղադրվելու են նախնական հումքը մեզգայի և սուսլոյի վերածող սարքավորումները,
- **գտման և խմորման բաժանմունքները**, որոնք կունենան մեծ տարողությամբ բաքեր և մեզգայի և սուսլոյի մշակման և խմորման սարքավորումներ:

Երկրորդը՝ տեղական օղիների պատրաստման արտադրամասն է, որն իր մեջ ներառելու է.

- հումքային հրապարակը, որտեղ իրականացվելու է հումքի ընդունումը, սորտավորումը ու չորացումը,
- **մանրացնող-մամլող բաժինը**, որտեղ տեղադրվելու են նախնական հումքը մանրացնող-ջարդող և հատուկ խառնուրդի վերածող սարքավորումները,
- **օղու սպիրտի ստացման բաժանմունքը**, որտեղ տեղադրվելու են հատուկ բաքերը և «ջերմափոխանակիչ»-ները, որոնց միջոցով բազմակի գոլորշիացման և կոնդենսավորման եղանակով ստացվելու է մաքրված սպիրտը, որից էլ և պատրաստվելու է վերջնական արտադրանքը,
- **ֆիլտրացման և վերջնական արտադրանքի պատրաստման բաժինը:**

Ներդրումային այս ծրագրի իրագործման մասով անհրաժեշտ է ուշադրություն հատկացնել մարքեթինգային մի շարք բաղադրիչների

Աղյուսակ 1.2

Պտղի տեսակ	Մթերման գին, (դրամ/1 կգ.)	Ծավալներ, որոնք կարելի է մթերել (տոննա)
Խաղող	150-180	840
Հոն	150-200	600-700
Սև շամբուկ/խնդեղն	200-220	70-80
Թուֆ	100-120	2800-3000
Սալոր /շլոր/	100-120	470

Հիմք ընդունելով մթերվող հումքի ներուժի ծավալները, մթերման կետերի համախառն արտադրանքը ծավալները ներկայացված են կից աղյուսակում.

Աղյուսակ 1.3

Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Գումարը (ՀՀ դրամ)
Գինեհումք	լիտր	562800	350	196980000
Հոնի օղի	0,5լ. շիշ	37143	2000	74286000
Թթի օղի	0,5լ. շիշ	1450000	1500	2175000000
Սև շամբուկ/խնդեղնի օղի	0,5լ. շիշ	37500	3000	112500000
Սալորի օղի	0,5լ. շիշ	235000	1500	352500000
ԸՆԴԱՄԵՆ՝				2911266000

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐ

Գինեհումքի իրացման գծով մթերման կետերի հիմնական շուկան՝ տեղական շուկան է, իսկ հաճախորդները՝ տեղական շուկայում գինիների արտադրությամբ զբաղվող ընկերությունները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ խմիչքների ներքին սպառման կառուցվածքում մեծապես գերակշռում է օղու սպառումը՝ 63-65%: Նշված ծավալի մեջ տարբեր համային երանգներով օղիները (*ինչը և ներկայացնում է ներդրումային ծրագրի հիմնական հետաքրքրությունը*) շուկայում ներկայացնում են առանձին՝ բավականին հեռանկարային, սեզմենտ, որը բաղկացած է տեղական բնական մրգային օղիներից (*թթի, հոնի, տանձի, բալի, ծիրանի, և այլն*) և չնչին քանակությամբ ներմուծված ապրանքատեսակներից: Ակնկալվում է, որ տվյալ բիզնես նախագծի իրականացման հիմնական ներդրողը՝ մասնավորն է, Կառավարությունն ի դեմս Սյունիքի մարզպետարանի և բանկերի արդյունավետ մասնակցությամբ: Այս տեսակետից ակնկալվում է, որ ներդրումների ամբողջ ծավալում Կառավարության օպտիմալ չափաբաժինը կկազմի մոտ 20 %, որն ամբողջովին ֆինանսական բնույթի է: Ծրագրով անհրաժեշտ ներդրումային չափաբաժնի մոտ 30%-ը նախատեսվում է իրականացնել բանկերի վարկային միջոցների ներգրավման շնորհիվ: Ավելին, բանկերը կապահովեն ներդրումային ծրագրի ֆինանսավորման ողջ գործիքակազմը: Ծրագրի իրականացման 50%-ի ծանրությունը իր վրա է վերցնելու մասնավորը: Այսպիսով,

- *Մարզի բոլոր 8 մթերման կետերի համար ձեռքբերվող սարքավորումների և ագրեգատների արժեքը կկազմի 600-610 մլն դրամ, իսկ ավտոտրանսպորտային միջոցների արժեքը՝ մոտ 150-155 մլն դրամ:*

- Աշխատուժի պահանջարկի տեսակետից, անհրաժեշտ է մոտ 25 մլն դրամ ներդրում՝ մեկ ամսվա աշխատավարձերի ֆոնդի չափով:
- Սկզբնական շրջանում բիզնեսի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով սարքավորումների պահեստամասերի և նյութերի, ինչպես նաև հումքի պաշարներ ստեղծելու տեսակետից անհրաժեշտ է իրականացնել 120-125 մլն դրամի ներդրում (ձեռքբերվող սարքավորումների և ագրեգատների մոտ 20%-ի չափով):
- ISO որակի կառավարման համակարգի ներդրման գումարը կկազմի մոտ 50 մլն դրամ: Հետագայում՝ 2-3 տարին մեկ ընկերությունը կկատարի 16,5 մլն դրամի սերտիֆիկացման համար անհրաժեշտ ծախսեր:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Աղյուսակում ներյացված է տվյալ ծրագրի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ օպտոմալ անձնակազմը: Ծրագրի ընդլայնման հետ զուգահեռ հնարավոր է, որ անհրաժեշտություն առաջանա նոր ղեկավար հաստիքների ստեղծման:

Աղյուսակ 1.4

Հաստիքի անվանում	Քանակ	Մշտական	Որակավորված
Ղեկավար անձնակազմ	1	1	1
Փոխտնօրեն/Գլխավոր ճարտարագետ	1	1	1
Ֆինանսիստ/հաշվապահ	1	1	1
Տարածքային կառույցների ղեկավարներ	8	8	8

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ

Մթերման կետերի/արտադրամասերի բնականոն գործունեության և թանկարժեք սարքավորումների շահագործման և տեխնիկական սպասարկման համար կպահանջվեն 96 հոգի որակավորված մասնագետներ/բանվորներ, ինչպես նաև 16 հոգի բարձր որակավորված և վերապատրաստված սպասարկող/տեխնիկական անձնակազմ:

ՌԻՍԿԵՐ և ՎՏԱՆԳՆԵՐ

- Որակյալ, մասնագիտացված աշխատուժի պակաս,
- վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առաջացում,
- երաշտի պատճառով մթերման կարողությունների թերբեռնում,
- գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների սակավության/բացակայության, ինչպես նաև վարկային միջոցների սղության պատճառով մթերվող պտղի անբավարար ծավալներ,

- ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վատ որակի պատճառով գյուղացու համար մատչելիության դժվարություն,
- գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկայնության, ոլորտի ապահովագրական համակարգի բացակայության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման մասով տարաժամկետ վարձավճարների հետ կապված խնդիրներ,
- գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով մթերման համար անհրաժեշտ պտղի սակավություն և որպես հետևանք՝ մթերման կարողությունների թերբեռնում և աշխատուժի թերբեռնված օգտագործում
- գինիների և օղիների ներքին շուկայի կառուցվածքի և այնտեղ գործող խաղացողների փոփոխություն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1.5

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կստեղծվի առնվազն 125 նոր հիմնական աշխատատեղերի: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ շինարարական/այլ սկզբնական աշխատանքների ավարտից հետո՝ երկրորդ տարուց սկսած 30 հիմնական աշխատատեղերից, մինչև նշված 125 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կարող է հասնել 140-ի
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը գնահատվում է առնվազն 3,750 մլն դրամի շրջանակներում, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 3,950 մլն դրամի չափ:
<i>Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով</i>	
Համախառն հասույթ	Ընդհանուր համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 35,857մլն դրամ (միջին տարեկանը հասնում է 3,628 մլն դրամ), իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ 41,236 մլն դրամ
<i>Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով</i>	
Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ամբողջ ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 35,857 մլն դրամի արտադրանք, որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Սա նշանակում է, որ մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 3,585 մլն դրամով

2.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալման կենտրոնների հիմնադրում ծրագրով նախատեսվում է բիզնես մոդելի տեսքով վերակենդանացնել/վերագործարկել խորհրդային միության տարիներից մեզ հայտնի մեքենատրակտորային կայանների՝ /ՄՏԿ-ների/ համակարգն՝ իրականացնելով մարզի ներկայիս պահանջներին համապատասխան շտկումներ և ճշգրտումներ: Հաշվի առնելով նախնական հետազոտության ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավմամբ (փորձագիտական շրջանակներ, գործարար հատված, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ) ստացված արդյունքները, գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալման կենտրոններ է առաջարկվում հիմնել Սյունիքի մարզի հետևյալ ենթատարածաշրջաններում/համայնքներում:

- Միսիանի ենթաշրջան. Միսիան, Նորավան,
- Գորիսի ենթաշրջան. Գորիս, Խնձորեսկ,
- Կապանի ենթաշրջան. Կապան,
- Մեղրիի ենթաշրջան. Մեղրի:

Ընդհանուր առմամբ տվյալ ծրագրի իրականացման համար պահանջվում է մոտ 2,802,մլն դրամի ներդրում:

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Գյուղ-տեխնիկայի վարձակալման կենտրոնների հաճախորդներ կհանդիսանան ինչպես գյուղացիական տնտեսությունները, այնպես էլ գյուղացիական ֆերմերային տնտեսություններն ու գյուղական համայնքների բնակիչները: Հաշվարկներում որպես տվյալ ընկերության ապագա գործունեության հաջողության նախադրյալ օգտագործվել է մոտ 5 հզ հա սեփականաշնորհված չօգտագործվող վարելահողերի ներուժը՝ հաշվի չառնելով մնացած չօգտագործվող հողերի ռեսուրսը: Ներկայումս Սյունիքի մարզի տարածքում առկա տեխնիկայի տեսակները և քանակները և վարձակալության գործող գները ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 2.1

Տեխնիկայի տեսակները	Գործող տեխնիկայի մոտավոր քանակները	Վարձակալության գործող գները /հազ դր/	
		Տեխնիկայի վարձակալություն 1 տարով	Ծառայությունների մատուցում 1հա-ի հաշվով
1.1 Կոմբայն հացահատիկահավաք	151	420	20
1.2 Կոմբայն կերահավաք	27	380	15
1.3 Տրակտոր անիվավոր	733	350	12
1.4 Տրակտոր թրթուրավոր	261	350	15
1.5 Շարքացան*	111		
1.6 Խոտմամլիչ*	120		

1.7 Խոտհնձիչ տրակտորային*	215
1.8 Տրակտորային սրակիչ*	27
1.9 Գուլթան/տավիան*	294

* - տրամադրվում են գյուղատնտեսական տեխնիկայի հետ, որպես կցորդ սարքավորումներ

Վարձակալման օպտիմալ գները, որոնց պարագայում գյուղատնտեսական տեխնիկայից օգտվողների թիվը կտրուկ կավելանա, ներկայացված է հետևյալ աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 2.2

Տեխնիկայի անվանումը	Տեխնիկայի վարձակալություն՝ մեկ տարով (հազ. դրամ)	Ծառայությունների մատուցում՝ մեկ հեկտարի հաշվով (հազ. դրամ)
Կոմբայն հացահատիկահավաք	390	17
Կոմբայն կերահավաք	350	12
Տրակտոր անիվավոր	320	10
Տրակտոր թրթուրավոր	320	12

Աղյուսակ 2.3

Ենթաշրջան	Բնակավայր
Գորիս	Գորիս, Խնձորեսկ
Մեղրի	Մեղրի
Կապան	Կապան
Միսիան	Միսիան, Նորավան

Ենթադրվում է, որ գյուղատեխնիկայի վարձակալության կենտրոնների աշխարհագրական բաշխումը Սյունիքի մարզի տարածքում կունենա հետևյալ տեսքը /տես կից բերված աղյուսակը/.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Տվյալ ձեռնարկությունը լինելու է Փակ Բաժնետիրական Ընկերություն (ՓԲԸ), որում Սյունիքի մարզպետարանը հանդիսանալու է համահիմնադիր մասնավոր ներդրողի և վարկային կազմակերպության հետ մեկտեղ՝ 20/50/30 բաժնեմասային հարաբերակցությամբ: Հետագայում՝ երբ ձեռնարկությունը դուրս գա շահութաբերության ակնկալվող մակարդակի, Սյունիքի մարզպետարանը դուրս է գալու տվյալ բիզնեսից՝ վաճառելով իր փայը մեկ այլ շահագրգիռ կողմի:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ

Ձեռնարկության աշխատանքային անձնակազմի բաշխվածքն ունի հետևյալ տեսքը:

Աղյուսակ 2.3

Հաստիքի անվանում	Քանակ	Մշտական	Որակավորված
Մասնագետներ (կոմբայնավարներ, տրակտորիստներ)	200	200	200
Սպասարկող/տեխ. անձնակազմ	30	30	15




Գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալության կենտրոնների բնականոն շահագործման և տեխնիկական սպասարկման համար կպահանջվեն 200 հոգի որակավորված աշխատողներ, ինչպես նաև 30 հոգի սպասարկող անձնակազմ:

Նախատեսվում է, որ ներդրումների ամբողջ ծավալում Սյունիքի մարզպետարանի չափաբաժինը կկազմի մոտ 20 %՝, որն ամբողջովին ֆինանսական բնույթի է և կազմում է 560 մլն դրամ: Մասնավոր ներդրողի չափաբաժինը կազմում է 50 %, կամ մոտ 1,400 մլն դրամ: Ծրագրով անհրաժեշտ մնացած չափաբաժինը՝ 30 %-ը (840 մլն դրամ) նախատեսվում է իրականացնել վարկային միջոցների ներգրավման շնորհիվ: Ըստ ծրագրի իրականացման ուղղությունների, ներդրումների բաշխվածքն ունի հետևյալ տեսքը.

1. Հող, շենքեր/շինություններ և/կամ շենքային պայմանների բարելավում – տվյալ ձևաչափով ծրագրի պարագայում նպատակահարմար է հողի և շենք/շինությունների վարձակալության տարբերակը, ինչը նշանակում է, որ այս հողվածով ծախսեր չեն կատարվելու:

2. Զեռքերվող գյուղատնտեսական տեխնիկա և ագրեգատներ/սարքավորումներ.




Աղյուսակ 2.4

N	Տեխնիկայի/ մեքենատրակտորային պարկի ագրեգատների անվանումը	Պատկերը	Ընդհանուր քանակը	Միավորի շուկայական գինը (հզ դրամ)	Ընդհանուր գումար (հզ դրամ)
1	Կոմբայն հացահատիկահավաք «ՆԻՎԱ-ԷՖՏԵԿՏ» /օգտագործված/		46	12 210	561 660
2	Կոմբայն խոտհնձիչ (օրինակ՝ KDF-390 «FORTSCHRITT» SIPMA)		35	6 105	213 675
3	Տրակտոր “Բելառուս”		115	8 140	936 100
4	Շարքացան		52	4 884	253 968

5	Խոտամալիչ		70	2 035	142 450
6	Խոտհնձիչ		65	2 035	142 450
7	Խոտհնձիչ տրակտորային (жатка) (օրինակ՝ ЖВН-6Б)		35	3 256	113 960
8	Գութան/տափան		123	1 017.5	125 152,5
Ընդամենը՝					2 489 415,5

3. Ձեռք բերվող տրանսպորտային միջոցներ

Աղյուսակ 2.5

N	Տրանսպորտային միջոցի անվանումը/նշանակությունը	Պատկերը	Ընդհանուր քանակը	Միավորի շուկայական գինը (հզ դրամ)	Ընդհանուր գումար (հզ դրամ)
1	ГАЗ-3302 "ГАЗель" /բորտային/		1	4 070 000	4 070 000
2	ГАЗ-2705 "ГАЗель" /ֆուրգոն/		1	4 070 000	4 070 000
3	Ուրալ		1	2 035 000	2 035 000

4 Վոլգա ԳԱԶ 31		3	2 035 000	6 105 000
Ընդամենը՝				16 280 000

4. Աշխատուժի պահանջների տեսակետից, սկզբնական ժամանակաշրջանում ձեռնարկության բնականոն աշխատանքի ապահովման համար (աշխատավարձերի վճարում, և այլն) անհրաժեշտ է մոտ 47 մլն դրամ ներդրում՝ մեկ ամսվա աշխատավարձերի ֆոնդի չափով:

5. Սկզբնական շրջանում տվյալ համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով **պահեստամասերի եվ նյութերի պաշարներ ստեղծելու տեսակետից** անհրաժեշտ է իրականացնել 250 մլն դրամի ներդրում (ձեռքբերվող գյուղատնտեսական տեխնիկայի եվ ագրեգատների 10%-ի չափով): Հումք եվ պահեստամասեր

Պահեստամասերի զգալի մասը սկզբնական շրջանում կարելի է ձեռք բերել արտադրող գործարաններից (օրինակ՝ «Ռոստսելմաշ», Յարոսլավլի շարժիչների գործարան, և այլն): Հետագայում կարելի է կազմակերպել անհրաժեշտ պահեստամասերի արտադրությունը նաև տեղում՝ Կապանի մեքենաշինական գործարանի բազայի հիման վրա:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Մյունիքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.1%-ը (334,019 հա): Մարզն ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային, միջին լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մյունիքում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հայաստանի տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Մյունիքի մարզում է գտնվում Հայաստանի ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Արևափայլքի տարեկան տևողությունը հասնում է մինչև 2700 ժամի: Տեղումների տարեկան քանակը՝ մինչև 826 մմ (Միսիանի լեռնանցք): Տեղումների բաշխումը կապված է ոչ միայն բարձրության, այլև՝ լեռնաշղթաների ուղղության, դիրքավորման և ռելիեֆի ձևերի հետ:

Մարզի 43,8 հզ հա վարելահողերից գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվել է 32,6 հզ հա, որից 22,0 հզ հա հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 11,2 հզ հա վարելահող, որից 5,0 հզ հա սեփականաշնորհված է: Պատճառներից մեկը՝ գյուղտեխնիկայի ինչպես ֆիզիկական և բարոյական մաշվածությունն է, այնպես էլ մատչելիությունը գյուղական համայնքների բնակիչների և գյուղացիական տնտեսությունների համար: Տվյալ ներդրումային ծրագրի շնորհիվ Մյունիքի մարզի գյուղական համայնքների բնակչությանը տեխնիկայի՝ վարձակալության մատչելի գներով տրամադրման հնարավորություն կունենա: Հետագայում ծրագիրը հնարավորություններ կբացի Կապանի մեքենաշինական գործարանի բազայի հիման վրա գյու-

ղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների վերանորոգման արտադրամասի ստեղծման համար:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

- Որակյալ մասնագիտացված աշխատուժի պակաս,
- վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առաջացում,
- պետական ոչ բարենպաստ քաղաքականություն,
- երաշտի պատճառով ծառայությունների պահանջարկի անկում,
- հողային ռեսուրսների մասնատվածության բարձր չափաբաժնի, ինչպես նաև ոչ ռացիոնալ օգտագործման/պարապուրդի պատճառով ԳՎԿ-ների ծառայությունների հանդեպ պահանջարկի ցածր մակարդակ և/կամ ԳՎԿ-ների տեխնիկայի ավելորդ վազք,
- գյուղատնտեսական արտադրության մասնատվածության պատճառով ԳՎԿ-ների տեխնիկայի՝ գյուղացու վրա վարձակալման արժեքի արհեստական մեծացման պատճառով շոշափելի սեզմենտի կորուստ,
- գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների զարգացման ոչ պատշաճ տեմպերի, ինչպես նաև գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների անկատարության պատճառով ԳՎԿ-ների ծառայությունների հանդեպ պահանջարկի ցածր մակարդակ,
- գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների սակավությունը/բացակայության, ինչպես նաև վարկային (փոխառու) միջոցների սղության/անմատչելիության պատճառով հաճախորդների տվյալ սեզմենտի կորուստ,
- ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վատ որակի պատճառով մատչելիության դժվարություն, ինչպես նաև ԳՎԿ-ների տեխնիկայի շարքից դուրս գալը/վնասումը,
- գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության հետ կապված խնդիրների պատճառով ԳՎԿ ծառայությունների մասին անտեղյակությունը,
- գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկայնության, տվյալ ոլորտի ապահովագրական համակարգի բացակայության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հետ կապված խնդիրների պատճառով տարածամկետ վարձավճարների հավաքագրման հետ կապված խնդիրներ,
- մարզում առկա սահմանամերձ գյուղատնտեսական հողերի առկայության պատճառով ԳՎԿ-ների տեխնիկայի՝ թշնամական գործողությունների հետևանքով վնասման հավանականությունը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 2.7

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
Աշխատուժ	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ամբողջ ընթացքում ընդամենը կապահովվի առնվազն 239 նոր հիմնական աշխատատեղերի ստեղծում: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ շինարարական/այլ սկզբնական աշխատանքների ավարտից հետո՝ առաջին տարուց սկսած 124 հիմնական աշխատատեղերից, մինչև նշված 239 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կհասնի 251-ի
Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ	Ծրագրի լրիվ իրագործման պայմաններում (լավատեսական տարբերակ), յուրաքանչյուր տարի, սեզոնի ընթացքում, կապահովվի նաև միջինում 15 ժամանակավոր/սեզոնային աշխատողների ներգրավում
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը գնահատվում է առնվազն 7,131,665,068 դրամի շրջանակներում, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 7,488,248,321 դրամի չափ:
Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով	
Համախառն հասույթ	Ընդհանուր համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 15,872,010,175 դրամ (միջին տարեկանը հասնում է 1,619,133,916 դրամի), իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ ընդամենը 18,252,811,701 դրամ
Ծախույթ	Նշված 15,872,010,175 դրամ ծավալից Ծրագրի 10 տարիների ամբողջ ընթացքում շահույթը կկազմի 878,363,536 դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 1,010,118,067 դրամ:
Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 2,801,887,050 դրամի սկզբնական ներդրումներ, որից մոտավորապես 15%՝ (420,283,058 դրամ արժողությամբ) տեղական գնումներն են, ներառյալ շինարարությունը:
Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ամբողջ ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 15,872,010,175 դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Սա նշանակում է, որ մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 1,587,201,017 դրամով
Հարկերի տեսքով	Հարկերի ընդհանուր գումարը, իհարկե, բարդ է կանխատեսել, սակայն կոպիտ հաշվարկներով, հարկային ընդհանուր մասհանումները կկազմեն 2,117,309,076 դրամ՝ ամբողջ իրագործման ընթացքում: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից (158,720,102 դրամ), եկամտային հարկից (1,782,916,267 դրամ) և շահութահարկից (175,672,707 դրամ):

3. ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՄՐԳԵՐԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԹԵՐՄԱՆ, ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍՈՐՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Սառնարանային տնտեսությունների, գյուղաբերքների եվ մրգերի միջհամայնքային մթերման, տեսակավորման եվ սորտավորման կենտրոնների հիմնադրում ծրագրի մշակման ժամանակ հաշվի է առնվել Սյունիքի մարզի բոլոր ենթատարածաշրջաններում իրականացված հետազոտական աշխատանքները՝ շահագրգիռ կողմերի (փորձագիտական շրջանակներ, գործարար հատված, տեղական ինքնակառավարման մարմիններ, ՀԿ-ներ) և ստացված արդյունքները: Առաջարկվում է հիմնել փոքր և միջին չափսերի և սառնարանային տնտեսությունների և ռեֆրիժերատորային ավտոպարկ, ինչպես նաև գյուղաբերքների և մրգերի մթերման, տեսակավորման և սորտավորման կենտրոններ՝ հետևյալ ենթատարածաշրջաններում:

Աղյուսակ 3.1

Մարզի տարածաշրջան	Համայնքների քանակ	Համայնքների անվանում
Գորիս	4	Գորիս քաղաք, Շինուհայր, Խնածախ, Խնձորեսկ
Կապան	1	Կապան քաղաք
Մեղրի	3	Ագարակ, Լեհվազ, Շվանիձոր
Սիսիան	5	Աշոտավան, Ախլաթյան, Դարբաս, Շաղաթ, Սիսիան քաղաք
Ընդամենը՝	13	

Տիպային մեկ սառնարանային մթերման կետում տեղակայված են գյուղատնտեսական մթերքների պահպանման համար նախատեսված կամերաներ և միջնապատերով առանձնացված զանազան օժանդակ տարածքներ: Սովորաբար սառնարանային պահեստները զինված են ավտոմոբիլային ռամպաներով՝ գյուղատնտեսական արտադրանքի ընդունման և բացթողնման համար: Կախված ջերմաստիճանային ռեժիմներից սառնարանային կամերաները կարող են լինել երեք տիպի.

- **Ա տիպի միջին ջերմաստիճանային կամերաներ** – ապահովում են արտադրանքի պահպանումը +100 C-ից 0 C ջերմաստիճանային միջակայքում
- **Բ տիպի ցածր ջերմաստիճանային կամերաներ** – ապահովում են արտադրանքի սառեցումը և պահպանումը 0 C-ից -100 C ջերմաստիճանային միջակայքում
- **Գ տիպի ցածր ջերմաստիճանային կամերաներ** – ապահովում են արտադրանքի սառեցումը և պահպանումը -100 C-ից -300 C ջերմաստիճանային միջակայքում

Վերոհիշյալ 13 սառնարանային տնտեսությունների ծրագրի իրագործման համար ընդհանուր առմամբ պահանջվում է մոտ 2,3 մլն դրամի ներդրում, իսկ առաջին տարվա համախառն շրջանառությունը ներկայացված է աղյուսակ 3.2-ում.

Աղյուսակ 3.2

N	Մթերվող պայմանական ապրանքի/ծառայության անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Գումարը (ՀՀ դրամ)
1	Կարտոֆիլ	տոննա	8280	12000	99360000
2	Բանջարա/բոստանային մշակաբույս	տոննա	3160	8000	25280000
3	Պտուղ/հատապտուղ	տոննա	870	35000	30450000
4	Խաղող	տոննա	810	45000	36450000
5	Ավտոռեֆրիժեռատորային բեռնափոխադրում ԸՆԴԱՄԵՆԸ՝	մեքենա/կմ	150000	250	37500000 229040000

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստորև բերված են տվյալ գործարար ծրագրի նպատակահարմարության որոշ հիմնավորումներ

- ա) շուտ փչացող և ապրանքային տեսքը կորցնող ապրանքները կփրկվեն փչանալուց և կտեղափոխվեն դեպի մայրաքաղաքի (ապագայում նաև՝ արտասահման) և այլ շուկաներ,
- բ) այս տնտեսությունները միաժամանակ կարող են նաև կատարել կաթի և մսի մթերման միջհամայնքային կետերի գործառույթներ՝ օգտագործելով շենքային հնարավորությունները,
- գ) Միսիանի տարածաշրջանում տվյալ կենտրոնները անփոխարինելի դեր կխաղան սիստորի, մեդրի, կարտոֆիլի, կտավատի (նաև՝ ձեթ), լոբու և սնկի մթերման գործում,
- դ) այս ծրագիրը լրացուցիչ խթան կհանդիսանա ինչպես արքայանարնջի, թզի, և նռան կուլտիվացման, այնպես էլ գյուղատնտեսական ավանդական ապրանքատեսակների արտադրության ավելացման համար:

Իրականում մթերման և սառնարանային տնտեսությունների բացակայության պայմաններում բերքի մի մասը մնում է ծառի վրա, թափվում կամ օգտագործվում է տնական պայմաններում:

Աղյուսակ 3.3

N	Անվանում	«չօգտագործվող» բերքի տեսակարար կշիռը, %
1	Կարտոֆիլ	30
2	Կաղամբ	20
3	Արքայանարինջ	10
4	Թուզ	5-7
5	Խաղող	90

Այդ առումով ունենք աղյուսակ 3.3-ում ներկայացված պատկերը: Պարզ է դառնում, որ միայն մթերման և տեղափոխման հնարավորությունների ստեղծման շնորհիվ գյուղացին կարող է էապես ավելացնել բերքից ստացվող ընդհանուր եկամուտը:

Աղյուսակ 3.4

N	Անվանում	Բազմապատկիչ գործակից
1	Կարտոֆիլ	1,5
2	Կաղամբ	1,5
3	Արքայանարինջ	2,5
4	Նուռ	2,5

Օգտագործելով վերը ներկայացված ,չօգտագործվող բերքի տեսակարար կշիռները և բազմապատկիչ գործակիցները և փորձելով ստանալ, չօգտագործվող բերքի և պոտենցիալ աճի ծավալները, ապա կունենանք աղյուսակ 3.4-ում ներկայացված հետևյալ պատկերը:

5	Թուզ	2,5
6	Խաղող	2,0

Աղյուսակ 3.5

1	2	3	4	5	6
N Գյուղատնտեսական մշակաբույսի անվանումը/խումբը	Փաստացի բերքը, հզ տ	Չօգտագործվող բերքի տեսակարար կշիռը, %	Չօգտագործվող բերքի ծավալը, հզ տ	Պոտենցիալ աճի ծավալը, հզ տ	Մարզի իրական ներուժը (4+5), հզ տ
1 Կարտոֆիլ	27.6	30	27,6x0,3=8,28	27,6x1,5=41,4	49.68
2 Բանջար /բոստանային	15.8	20	15,8x0,2=3,16	15,8x1,5=23,7	26.86
3 Պտուղ և հատապտուղ	11.6	7,5	11,6x0,075=0,87	11,6x2,5=29	29.87
4 Խաղող	0.9	90	0,9x0,9=0,81	0,9x2=1,8	2.61

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Տվյալ սառնարանային տնտեսությունների հաճախորդներ կհանդիսանան Սյունիքի մարզի ինչպես առանձին գյուղացիական տնտեսություններ, այնպես էլ գյուղացիական ֆերմերային տնտեսություններ և գյուղական համայնքների բնակիչներ, որոնք նման հնարավորությունների բացակայության պատճառով ամեն տարի զգալի քանակությամբ բերք են կորցնում:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Աղյուսակ 3.6

Հաստիքի անվանում	Քանակ	Մշտական	Որակավորված
Ղեկավար անձնակազմ	1	1	1
Փոխտնօրեն/Գլխավոր ճարտարագետ	1	1	1
Ֆինանսիստ/հաշվապահ	1	1	1
Տարածքային կառույցների մենեջերներ	13	13	13

Կազմակերպական իրավական տեսակետից տվյալ ձեռնարկությունը լինելու է Փակ Բաժնետիրական Ընկերություն (ՓԲԸ), որում ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս Սյունիքի մարզպետարանի,

հանդիսանալու է համահիմնադիր մասնավոր ներդրողի և վարկային կազմակերպության հետ մեկտեղ՝ 20/50/30 հարաբերակցությամբ: Հետագայում՝ երբ ձեռնարկությունը դուրս գա շահութաբերության ակնկալվող մակարդակի, Կառավարությունը դուրս է գալու տվյալ բիզնեսից՝ վաճառելով իր փայլ մեկ այլ շահագրգիռ կողմի: Նախագծի ներդրողներ են հանդիսանալու Սյունիքի մարզպետարանը, մասնավոր ներդրողներ և բանկային հատվածը: Նախատեսվում է, որ ներդրումների ամբողջ ծավալում Կառավարության օպտիմալ չափա-

բաժինը կլինի 20 %, որն ամբողջովին ֆինանսական բնույթի է և կազմում է մոտ 405,4 մլն դրամ մասնավոր ներդրողի օպտիմալ չափաբաժինը կազմում է 50 %՝ ավելի քան 1 մլրդ դրամ: Ծրագրով անհրաժեշտ մնացած չափաբաժինը՝ 30 %-ը (մոտ 610 մլն դրամ) նախատեսվում է իրականացնել վարկային միջոցների ներգրավման շնորհիվ:

Ըստ իրականացման ուղղությունների, ներդրումների բաշխվածքն ունի հետևյալ տեսքը.

- 1. Հող, շենքեր/շինություններ և/կամ շենքային պայմանների բարելավում** –տվյալ ձևաչափով ծրագրի պարագայում նպատակահարմար է հողի և շենք/շինությունների վարձակալության տարբերակը ինչը նշանակում է, որ այս հոդվածով ծախսեր չեն կատարվելու:
- 2. Ձեռքբերվող սարքավորումներ (մեկ սառնարանային տնտեսության կտրվածքով).** Մեկ տիպային սառնարանային տնտեսության կառուցման/եղած շենքային պայմանների հարմարեցման համար պահանջվում է մոտ 82.000 դրամ՝ շենքի 1 քմ դիմաց: Տվյալ ծրագրի շրջանակներում տիպային է համարվում 1,500 քմ շենքային տարածքով տնտեսությունը: Հաշվի առնելով, որ նախատեսվում է ունենալ ընդհանուր առմամբ 13 նման տնտեսություն, ապա ընդամենը տվյալ հոդվածով ներդրումները կկազմեն 1,600 մլն դրամ:
- 3. Ձեռք բերվող տրանսպորտային միջոցներ.**

Աղյուսակ 3.7

N	Տրանսպորտային միջոցի անվանումը/նշանակությունը	Ընդհանուր քանակը	Միավորի շուկայական գինը (դրամ) *	Ընդհանուր գումար (դրամ)
1	Ռեֆրիժերատոր MAN TGA 26.430 E4	5	20 350 000	101 750 000
	Ընդամենը՝			101 750 000

4. **Աշխատուժի հանդեպ պահանջների** տեսակետից, սկզբնական ժամանակաշրջանում ձեռնարկության բնականոն աշխատանքի ապահովման համար (աշխատավարձերի վճարում, և այլն) անհրաժեշտ է 21,400,000 դրամ ներդրում՝ մեկ ամսվա աշխատավարձերի ֆոնդի չափով:

5. **ՄԿՁԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ** նպատակով սարքավորումների և ավտոտրանսպորտային պարկի պահեստամասերի և նյութերի պաշարներ ստեղծելու տեսակետից անհրաժեշտ է իրականացնել մոտ 317 մլն դրամի ներդրում (ձեռքբերվող սարքավորումների եվ ագրեգատների 20%-ի չափով):

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ

Տվյալ գործարար ծրագրի շրջանակներում սառնարանային տնտեսությունների արդյունավետ և բնականոն գործունեության, սարքավորումների շահագործման և տեխնիկական սպասարկման համար կպահանջվեն 26 հոգի բարձր որակավորված և վերապատրաստված սպասարկող/տեխնիկական անձնակազմ, ինչպես նաև 65 հոգի բարձր և միջին որակավորում ունեցող բանվորներ: Այսպիսով, ձեռնարկության աշխատանքային անձնակազմի մասնագիտական և քանակական բաշխվածքը կունենա հետևյալ տեսքը.

Աղյուսակ 3.8

Հաստիքի անվանում	Քանակ	Մշտական	Որակավորված
Սպասարկող/տեխնիկական և անձնակազմ	26	26	26
Բանվորական անձնակազմ	65	65	65

ՀՈՒՄՔ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ

Գյուղատնտեսական արտադրանքի՝ ամբողջությամբ տեղական ծագման լինելու պարագայում նախատեսվում է, որ ծրագրի առարկա հանդիսացող սառնարանային տնտեսությունների անխափան և բնականոն գործունեությունը, հզորությունների լրիվ բեռնումը երաշխավորված են լինելու: Ձեռնարկությունների համար կարևոր է նաև սարքավորումների և պահեստամասերի հասանելիությունն ու մատչելիությունը: Այս տեսակետից շեշտը դրվել է Ռուսաստանի և Բելառուսի շուկաներից դրանց ձեռքբերման վրա:

Տվյալ գործարար ծրագիրը համահունչ է ինչպես ՀՀ Սյունիքի մարզի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման, այնպես էլ գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակներին: Այն սերտորեն առնչվում է նպատակային վարկերի միջոցով գյուղատնտեսական հումքի վերամշակման փոքր կարողությունների ձևավորման հնարավորությունների, և մարզի գյուղատնտեսության համար կարևոր հիմնախնդիր հանդիսացող ապրանքայնության մակարդակի բարձրացման դրույթներին: Հիմնական թիրախը՝ պահեստային և սառնարանային տնտեսությունների ստեղծման միջոցով իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովման խնդիրների լուծումն է՝ դրանց համատեղ օգտագործման (կոոպերատիվի) սկզբունքով կազմակերպման միջոցով:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆՔՆԵՐ

- Վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առաջացում;
- պետական ոչ բարենպաստ քաղաքականություն;
- երաշտի պատճառով մթերման կարողությունների թերբեռնում;
- մարզի բուսաբուծության ճյուղի ցածր բերքատվության և գյուղատնտեսական կենդանիների ցածր մթերատվության, արտադրության ծավալների՝ հիմնականում էքստենսիվ եղանակով ավելացման պատճառով բերքի/մթերքի սակավության վտանգ և մթերման կարողությունների թերբեռնում;

- գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների սակավության/բացակայության, ինչպես նաև վարկային (փոխառու) միջոցների սղության/անմատչելիության պատճառով մթերվող պտղի անբավարար ծավալներ;
- ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վատ որակի պատճառով գյուղացու համար մատչելիության դժվարություն ինչպես նաև սեփական տեխնիկայի շարքից դուրս գալը/վնասումը;
- գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության հետ կապված խնդիրների պատճառով տվյալ տնտեսությունների կողմից մատուցված ծառայությունների մասին անտեղյակությունը;
- գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկայնության, տվյալ ոլորտի ապահովագրական համակարգի բացակայության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հետ կապված խնդիրների պատճառով տարածամկետ վարձավճարների վճարման հետ կապված խնդիրներ;
- գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, գյուղատնտեսական արտադրության մասնատվածության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման համար վերոհիշյալ տնտեսությունների սակավ հնարավորությունների և դրա իրականացմամբ զբաղվող կառույցների գրեթե բացակայության հետևանքով մթերման համար անհրաժեշտ պտղի սակավություն և որպես հետևանք՝ մթերման կարողությունների թերբեռնում և աշխատուժի թերբեռնված օգտագործում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 3.8

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
Աշխատուժ	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կստեղծվի առնվազն 107 նոր հիմնական աշխատատեղ: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ շինարարական և այլ սկզբնական աշխատանքների ավարտից հետո: Երկրորդ տարուց սկսած 23 հիմնական աշխատատեղերից այդ թիվը կաճի և կհասնի մինչև 107-ի: Լավատեսական զարգացումների դեպքում նոր ստեղծվող աշխատատեղերի ընդհանուր թիվը կկազմի 118:
Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ	Ծրագրի լավատեսական սցենարի իրագործման պայմաններում յուրաքանչյուր տարի կապահովվի միջինում 15 ժամանակավոր/սեզոնային աշխատողների ներգրավում
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը գնահատվում է առնվազն 3,230 մլն դրամ, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ մոտ 3,391 մլն դրամի չափ:
Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով	
Համախառն հասույթ	Ընդհանուր համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 22,618,855 հզ դրամ (միջին տարեկանը հասնում է 4,335,651 հզ դրամի), իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ 26,011,683 հզ դրամ
Ծախույթ	Նշված 22,618,855 հզ ծավալից ծրագրի 10 տարիների ամբողջ ընթացքում շահույթը կկազմի 13,536,861 հզ դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 15,567,390 հզ դրամ:
Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 2,027,910 հզ դրամի սկզբնական ներդրումներ, որից մոտավորապես 78%-ը՝ (1,587,300 հզ դրամ) տեղական գնումներն են՝ ներառյալ շինարարությունը:
Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 22,618,855 հզ դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Սա նշանակում է, որ մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 2,261,885 հզ դրամի գումարի չափով
Հարկերի տեսքով	Հարկերի ընդհանուր գումարը բարդ է կանխատեսել, ծրագրի կենսացիկլի ամբողջ ժամանակահատվածի համար դրանք մոտավորապես կկազմեն 3,741,061 հզ դրամ: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից (226,188 հզ դրամ), եկամտային հարկից (807,500 հզ դրամ) և շահութահարկից (2,707,372 հզ դրամ)

4. ՉՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՉՐԱՆՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Չրերի արտադրության համար նախատեսված հատուկ չրանոցների հիմնադրում ծրագրով առաջարկվում է հիմնադրել չրերի արտադրության համար նախատեսված հատուկ չրանոցներ՝ Սյունիքի մարզի 10 համայնքներում՝ հիմնելով 300 քմ տարածքով չրանոցներ: Ամեն չրանոց հնարավորություն կտա մթերելու մոտ 12-14 տոննա միրգ, որից կստացվի մոտ 4 տոննա չիր: Ավանդական մրգատեսակների հետ միասին նախատեսվում է մթերել և վերամշակման ենթարկել նաև էկոլոգիապես մաքուր տանձ և խնձոր: Մարզը հարուստ է վայրի մրգատեսակներով:



Չրերի արտադրությունը կարելի է համարել հայկական գյուղատնտեսության առավել հեռանկարային ոլորտներից մեկը. այն արդեն ավանդույթ է դարձել երկրում և իրականացվում է Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Չրերի արտադրության արդյունավետության բարձրացման և ծավալների մեծացման համար պետք է ավելացնել բերքի ծավալները՝ հիմնականում աշխատանքների արդյունավետության ու

արտադրողականության հաշվին: Միայն այս դեպքում է հնարավոր բավարարել արտաքին շուկայից հնարավոր պատվերների դեպում առաջացող պահանջարկը: Չրերի արտահանումն այսօր իրականացվում է փոքր խմբաքանակներով անհատական պատվերներով: Խնդիրներ կան նաև սանիտարական պայմանների ու տեխնոլոգիաների ապահովման հարցում: Սյունիքի մարզում չրերի արտադրության ոլորտում իրացումը և արտահանումն ավելացնելու մեծ ներուժ կա: Անհրաժեշտ է սակայն խստորեն հետևել չորացման կանոններին և պահպանել որակի միջազգային չափանիշները:

Աղյուսակ 4.1Տեսակ, էկոլոգիապես մաքուր, վայրի	Քանակ տոննա	1 տոննայի հանձնման գին/դրամ	համայնքներ
տանձ	600-700	120,000	Կապանի, Գորիսի անտառամերձ
խնձոր	50-60	130,000	բնակավայրեր, Մեղրիի տարածաշրջանի Լիճք, Տաշտուն համայնքներ



Սյունիքի մարզում արտադրվում է մոտ 130 տոննա պտուղ բերք, որից չրերի տեսքով վերամշակման է ենթարկվում ընդամենը 20 տոննա: Անտառային ֆոնդը կազմում է 94,825 հա տարածք, որից հնարավոր է հավաքել էկոլոգիապես մաքուր վայրի տանձ, խնձոր մոտ 700-750 տոննայի չափով: Տարածաշրջանի բնակլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն են տալիս աճեցնելու այնպիսի մրգատեսակներ, ինչպիսիք են թուզը, արքայանարինջը, խնձորը, խաղողը (չամիչ), սալորը այլ մրգատեսակներ, որոնց պահան-

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Հայաստանում արտադրվում է տարեկան մոտ 1100 տոննա չիր, իսկ տարեկան սպառվում է մոտ 1700 տոննա չիր, որից 600 տոննան ներկրվում է: Մյունիքի մարզում տարեկան արտադրվում է ընդամենը 20 տոննա չիր, որից`

- սալոր-2 տոննա
- տանձ -3 տոննա
- խնձոր-5 տոննա
- թուզ -10 տոննա
- արքայանարինջ -0.5 տոննա

Ներկայում Հայաստանում կա մոտ 220 չրանոց, որոնցից ընդամենը 12-են գտնվում Մյունիքի մարզում (տես աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2

Չրանոցների քանակը, արտադրողականությունը			
Արևային չրանոց		Արհեստական չրանոց	
հատ	Տարեկան արտադրողականությունը (տոննա)	հատ	Տարեկան արտադրողականությունը (տոննա)
10	10-20	2	15

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ծրագիրը կգործի որպես մասնավոր սեփականություն: Ծրագիրը հիմնականում կկառավարի ծրագրի տնօրենը: Կառավարման համար անհրաժեշտ կլինի տիրապետել չիր պատրաստելու տեխնոլոգիաներին: Տնօրենը պետք է համատեղ աշխատի միջազգային և տեղական ոլորտային կազմակերպությունների հետ, մասնավորապես կարող է պրակտիկ դասընթացներ անցնել “Չիր” ԲԲԸ-ում, որը հնարավորություն կտա ստանալ գիտելիքներ տեղում: Տեղական և միջազգային կազմակերպությունները կարող են աջակցել արտադրանքի իրացմանը:

Աղյուսակ 4.3

Ներդրումների բաշխվածք				
Մարզ/ համայնք	Ներդրող	Վարկ	Ընդամենը	
10%	45%	45%	100%	
Ֆինանս.	Բնախրային			
10%	90%			
119,714	1,077,424	5,387,119.	5,387,119	11,971,375

Ծրագիրը կիրականացվի պետության, մասնավոր ներդրողի և բանկի համագործակցության շնորհիվ: Ներդրումների մասնաբաժիններն ըստ գումարների և տեսակների ներկայացված է աղյուսակ 4.3- ում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի 7 հոգուց բաղկացած աշխատակազմ: Աշխատողների քանակը և աշխատավարձերը ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 4.4

Աշխատավարձի հաշվարկ	Թվաքանակ	Աշխատավարձ	Ընդամենը
Ղեկավար անձնակազմ	1	250,000	250,000
Ծառայողներ	2	120,000	240,000
Բանվորներ	3	100,000	300,000
Սպասարկող/տեխ. անձնակազմ	1	110,000	110,000
Ընդամենը			900,000

«Չօգտագործվող» բերքի տեսակարար կշիռների և բազմապատկչի գործակիցների համադրմամբ կարող ենք ստանալ «չօգտագործվող» բերքի և պոտենցիալ աճի ծավալները. արդյունքում կունենանք հետևյալ պատկերը:



Սկզբնական ներդրումներով կկառուցվի արևային չրանոցներ-300 քմ: Այն իր մեջ կներառի ծխարան-6 քմ: Անհրաժեշտ կլինի հատկացնել տարածք լվանալու, տեսակավորելու համար: Հարկավոր է ձեռք բերել չորացման համար մադեր, տարաներ: Տեղափոխման համար անհրաժեշտ կլինի նաև տրանսպորտային միջոց:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Մինչ բուն ներդրումներին անցնելը, հարկ է նշել, որ համաձայն որոշ ուսումնասիրությունների, չրամթերքների արժեզրթայի (value chain) շարժն ունի հետևյալ փուլերը, իսկ յուրաքանչյուր փուլին ավելացված արժեքներն իրենց հերթին առաջացնում են արժեզրթա:

- հավաքագրում և տեղափոխում,
- մթերում,
- վերամշակում չորացման միջոցով,
- մանրածախ վաճառք
- արտահանում:

Այս արժեզրթան էլ իր հերթին ազդում է ներդրումների կառուցվածքի և ծավալների վրա, որոնց մի մասը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 4.5

Սկզբնական ներդրումներ	Գումար
Հող	200,000
Չորանոցներ	6,015,375
Տրանսպորտային միջոցներ	3,256,000
Պաշարների ձեռք բերում	2,500,000
ԸՆԴԱՄԵՆԸ	11,971,375

Չորանոցների համար նախատեսված գումարի մեջ ներառված են և շինարարական աշխատանքները և նյութերը, տարաները, մադերը չիր պատրաստելու համար: Պաշար-ների մեջ ներառված են մրգերը, փաթեթավորման համար տարաները այլ նյութերը:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրում պետական մասնակցությունը նախատեսվում է 10%-ի չափով, բնափրային կամ ֆինանսական ձևով, որն ուղղված կլինի հողերի ձեռք բերման, կամ այլ աջակցությանը: Պետության մասնակցությունն այս ծրագրում կբարձրացնի ծրագրի դերն ու նշանակությունը ներդրողներ գտնելու գործընթացում:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Չրերի արտադրության համար նախատեսված հատուկ չրանոցների հիմնադրում ներդրումային ծրագրով նախատեսվում է

- ավելացնել գյուղատնտեսական մթերքների՝ հատկապես տարբեր պտղատեսակների, ծավալները,
- գյուղական համայնքներում հիմնադրել գյուղատնտեսական բերքի վերամշակման կետեր,
- բարձրացնել արդյունավետությունը, մթերքների ապրանքայնության մակարդակի ավելացում, հատկապես պտղի և դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում հետևողական և արդյունավետ կերպով օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ռոտեյլի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

- Գյուղատնտեսական ռիսկեր - եղանակային վատ պայմանների պատճառով կարող է բերքատվությունը զգալիորեն իջնել: Այս ռիսկը կարելի նվազեցնել, եթե չրանոցներում վերամշակման ենթարկվեն տարբեր տեսակի մրգեր: Մրգերի դիվերսիֆիկացումը կնվազեցնի գյուղատնտեսական ռիսկը:
- Շուկայական ռիսկ-ներկրված ապրանքի գնի իջեցում, որը կարող է լինել տեղում արտադրված ապրանքի ինքնարժեքից ցածր:
- Պետք է նշել սակայն, որ հայկական չրերը ունեն բավական բարձր որակական և համային առանձնահատկություններ: Հիմնականում տեղական չրերը չեն պարունակում սուլֆատներ: Գնորդը այս հատկանիշին տալիս է մեծ նշանակություն, որն էլ կարող է պատճառ հանդիսանալ տեղական արտադրանքին շուկայում նախապատվություն տալուն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 4.6

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
<i>Աշխատուժ</i>	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի իրագործման 10 տարիների ընթացքում կստեղծվի առնվազն 10 նոր հիմնական աշխատատեղ, որին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ սկսած 7 հիմնական աշխատատեղերից մինչև նշված 10 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կհասնի 12-ի:
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր գումարը կազմում է 5.584.782 դրամ, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 6.701.738 դրամի չափ:
<i>Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով</i>	
Համախառն հասույթ	Համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 125.185 հզ դրամ, իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ 150.222 հզ դրամ:
Շահույթ	125.185 հզ դրամից Ծրագրի իրագործման 10 տարիների ընթացքում 4.254 հզ դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 5.105 հզ դրամ:
<i>Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով</i>	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 11.971 հզ դրամի սկզբնական ներդրումներ, որն ամբողջությամբ տեղական գնումներն են:
Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 125.185 հզ դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Մա նշանակում է, որ մարզի ՀՆԱ-ն ծրագրի ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 15.022 հզ դրամով:
Հարկերի տեսքով	Հարկերի ընդհանուր գումարը բարդ է կանխատեսել, սակայն կոպիտ հաշվարկներով, հարկային ընդհանուր մասհանումները կկազմեն 13.422 հզ դրամ՝ ամբողջ իրագործման ընթացքում: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից, եկամտային հարկից (աշխատավարձի ընդհանուր ֆոնդի գումար x 25%) և շահութահարկից (շահույթ x 20%)

5. ՎԱՅՐԻ ԹԵՅԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ՄԹԵՐՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՄ

Վայրի թեյաբույսերի եվ դեղաբույսերի մթերում և մշակում ներդրումային ծրագիրը կարող է լինել տիպիկ մոդել վայրի թեյաբույսերի և դեղաբույսերի չորացման համար նախատեսված հատուկ չորանոցների կառուցման, մթերման, մշակման և ար-



տադրություն կազմակերպելու նպատակով: Մյունիքի տարածաշրջանում առկա են դեղաբույսեր և թեյաբույսեր, որոնք կարող են հավաքվել էկոլոգիապես մաքուր բարձրադիր լեռնային շրջաններից: Թեյերի արտադրությունը սկսելու համար նախապես հարկավոր է մթերել հումք: Այս տարածաշրջանում կարելի մթերել ուրց, նանա, դաղձ, մասուր, մոշ, և այլ թեյաբույսեր և դեղաբույսեր: Փաթեթավորման տեսակից կախված է թեյերի իրացումը: Բույսերի բույրը

և բժշկական հատկությունները պահպանելու նպատակով առաջարկվում է DXDC 15 թեյի փաթեթավորման ավտոմատ մեքենա, որն ունի 1 րոպեում 105 պարկ (փաթեթիկ) պատրաստելու հզորություն. 1 ժամ աշխատելու դեպքում սարքավորումը կարող է արտադրել 252 տուփ թեյ՝ սպասարկվելով 2 աշխատողի կողմից: Մոտ 4.2 տոննա վերամշակված հումքից կարելի է ստանալ 105,000 տուփ թեյ: Բուսատեսակների խիստ սեզոնայնության պատճառով մթերման սեզոնը կարող է սկսվել մայիսից և ավարտվել խոր աշնանը: Հումքի մթերումը կկատարվի համայնքներում մինչև 30-40 գյուղացիներ ներգրավվելով: Մյունիքի կլիման նպաստում է, որ այստեղ հավաքված թեյաբույսերը ունենան բացառիկ որակ, հետևաբար նպատակահարմար է ստեղծել նմանատպ արտադրություններ, քանի որ մարզի տարածքում առկա են հետևյալ թեյաբույսերը՝ ուրց, նանա, դաղձ, մասուր, սրոհունդ, երիցուկ և վայրի դեղաբույսերիը՝ մասուր, մոշ, գնաբուկ, երիցուկ, խատուտիկ, սրոհունդ, թանթրվենի: Նշված վայրի թեյախոտերի և դեղաբույսերի մեծաքանակ պահանջարկի դեպքում՝ նպատակահարմար է տվյալ բույսերը աճեցնել նաև բաց երկնքի տակ: Այստեղ արտադրված ապրանքների համար հնարավոր է ապահովել էկոլոգիական մաքրություն, ավանդական ձևով հումքի հավաքում և մշակում:

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱՌՈՐԴՆԵՐ

Թեյերը վաճառվում են տարբեր տիպի փաթեթավորումներով: Ամենատարածված սպառումը Ռուսական շուկայում գտել են 1.5-2 գրամանոց, մոտ 20-25 պարկերով թեյի տուփերը: Պարկերով թեյերի օգտագործումը 2003 թվականին կազմել է Ռուսական շուկայի ընդամենը 14 տոկոսը, 2006 –ին մոտ 40 տոկոսը, իսկ 2009 թվականին՝ արդեն 61.3 տոկոսը: Մեծ Բրիտանիայում այսօր բնակչության 94 տոկոսն օգտագործում է պարկերով թեյը: Պարկերով թեյը նախընտրում են հիմնականում այն պատճառով, որ այն հնարավորություն է տալիս տնտեսելու ժամանակը: Ռուսական շուկայում թեյը ամենաշատ քանակությամբ իրաց-

վում է ինքնասպասարկման խանութների միջոցով: Այն կազմում է իրացման 30 տոկոսը: Հաջորդ մեծաքանակ իրացումը տեղի է ունենում շուկաների և մթերային խանութների միջոցով: Օգտագործելով միայն հայկական բնաշխարհի հումքը, առանց վնաս տալու էկոլոգիային կարելի է մթերել 300 տոննա ուրց, 250 տոննա մասուր, 200 տոննա դադձ և այլն:

Աղյուսակ 5.1

Ներքին շուկայի համար	"Մեզա Արարատ" մեկ տուփ-ի վաճառքի գինը	"Սարի թեյ" մեկ տուփ-ի վաճառքի գինը, ՀՀ դրամ
ուրց	810	820
դադց	810	800
ալոճ	1050	-
մասուր	960	560
ուրցադադց	810	-

Սյունիքի մարզի Գորսի տարածաշրջանում գործում է "Աբդա" ՍՊԸ -ն, Սարի թեյ ապրանքանիշով: "ՄԱՐԻ ԹԵՅ" ապրանքանիշի տակ արտադրվում է վեց տեսակի բուսական թեյեր՝ ուրց, դադձ, վայրի մասուր, մոշի տերևներ և այլ: Թեյաբույսերը հավաքում են մոտակա համայնքների բնակիչները՝ Միսիանի, Կապանի, Գորիսի բարձրադիր հարթավայրերից և սարերից: Մանրածախ թեյերի գներն ունեն հետևյալ տեսքը՝

դադձ, վայրի մասուր, մոշի տերևներ և այլ: Թեյաբույսերը հավաքում են մոտակա համայնքների բնակիչները՝ Միսիանի, Կապանի, Գորիսի բարձրադիր հարթավայրերից և սարերից: Մանրածախ թեյերի գներն ունեն հետևյալ տեսքը՝

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ծրագիրը կիրականացվի պետության, մասնավոր ներդրողի և ֆինանսական կազմակերպության համագործակցության շնորհիվ: Ներդրումների մանաբաժիններն ըստ գումարների և տեսակների ներկայացված է աղյուսակ 5.2-ում

Աղյուսակ 5.2

Սարգ/համայնք	Ներդրումների բաշխվածք		
	Ներդրող	Վարկ	Ընդամենը
10%	35%	55%	100%
Ֆինանսական	Բնաիրային		
10%	90%		
257,688	2,319,188	9,019,063	14,172,813
			25,768,750



Ծրագիրը կիրագործվի որպես մասնավոր սեփականություն և կկառավարի ծրագրի տնօրենը, ով պետք է տիրապետի որոշ կենսաբանական գիտելիքների, բույսերի մշակման, չորացման տեխնոլոգիաներին, արտադրական պրոցեսին: Արտադրանքի իրացումը պետք է իրականացնի վաճառքի մենեջերը, որը պետք է հետևի շուկայում մրցակիցներին, գնային քաղաքականությանը, մշակի կազմակերպության ռազմավարությունը: Ծրագրի իրականացման հա-

կանությանը, մշակի կազմակերպության ռազմավարությունը: Ծրագրի իրականացման հա-

մար անհրաժեշտ կլինի 11 հոգուց բաղկացած աշխատակազմ՝ ըստ ներկայացվող աշխատավարձերի: 30-40 գյուղացիներ նույնպես ընդգրկված կլինեն այս արտադրության մեջ, սակայն իրենց վճարումը կախված կլինի մթերված ապրանքի տեսակից և որակից:

Աղյուսակ 5.3

Աշխատավարձի հաշվարկ	Թվաքանակ	Աշխատավարձ	Ընդամենը
Ղեկավար անձնակազմ	1	400,000	400,000
Ծառայողներ	2	250,000	500,000
Բանվորներ	5	200,000	1,000,000
Սպասարկող/տեխնիկական անձնակազմ	3	150,000	450,000
Ընդամենը			2,350,000

Աղյուսակ 5.4

Սկզբնական ներդրումների համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել սարքավորում, հումք 4.2 տոննա, փաթեթացորման համար անհրաժեշտ նյութեր:

Սկզբնական ներդրումներ	Գումար
Հող	500,000
Շենք/շինություն	5,000,000
Սարքավորումներ	12,500,000
Տրանսպորտային միջոցներ	4,000,000
Պաշարների ձեռք բերում/այլ	3,768,750
ԸՆԴԱՄԵՆԸ	25,768,750

Նախատեսվում է, որ ընդհանուր առմամբ կարելի է տարեկան վաճառել 105,000 տուփ ուրցի, դադձի, մասուրի, և այլ դեղաթեյաբույսերով պատրաստված թեյեր: Տարվա ընթացքում աշխատանքները կկատարվեն հիմնականում 9-10 ամիսների ընթացքում:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պետական մասնակցությունը նախատեսվում է 10 տոկոսի չափով, բնափրային կամ ֆինանսական ձևով: Պետության դերը տվյալ ծրագրում կբարձրացնի ծրագրի դերն ու նշանակությունը ներդրողներ գտնելու գործընթացում:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը նպաստելու է

- գյուղատնտեսական մթերքների տարբեր պտղատեսակների, ծավալների ավելացմանը,
- գյուղական համայնքներում գյուղատնտեսական բերքի վերամշակման կետերի հիմնադրմանը

- արդյունավետությաններում գյանը, ըյունավետությաններում գյուղատնտեսական բերքի անը, ըյունավետությաններում գյուղատնտեսական բերքի վերամշակման կետերն կամ ֆինանսական ձևով: Պետության դերը տվյալ ծրագրում կբարձրացնի ծրագրի դերն ու նշանակությունը ներդրողներ գտնելու գործընթացում:յունը:վնաս տալո ըյունավետությաններում գյուղատնտեսական բերքի վերամշակման կետերն կամ ֆինանսական ձևով: Պետության

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

- Գյուղատնտեսական ռիսկը կապված է բերքատվության հետ: Տարվա բերքատվությունից կախված որոշ հումքեր կարող են նպատակահարմար չլինել արտադրության համար: Գների կտրուկ աճ կարող է դիտվել, և ինքնարժեքի բարձրացում: Արտադրատեսակների դիվերսիֆիկացվումը կարող է հեջավորել գյուղատնտեսական ռիսկը: Հայկական թեյերը յուրահատուկ են իրենց համի, բույրի և բժշկական նշանակության առումով, այդ իսկ պատճառով ընդհանուր թեյի սպառման մեջ խոտաբույսերի մասնաբաժինը չի նվազի:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 5.5

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
<i>Աշխատուժ</i>	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կապահովվի առնվազն 17 նոր հիմնական աշխատատեղերի ստեղծում: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ սկսած 11 հիմնական աշխատատեղերից: Լավատեսական զարգացումների դեպքում հիմնական աշխատողների թիվը կհասնի 18-ի:
Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ	Ծրագրի լիարժեք իրագործման պայմաններում յուրաքանչյուր տարի կստեղծվի միջինում 40 ժամանակավոր աշխատատեղեր:
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը կլինի մոտ 35.973 հզ դրամի շրջանակներում, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 36.456 հզ դրամ:
<i>Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով</i>	
Համախառն հասույթ	Համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 782.409 հզ դրամ
Շահույթ	Համախառն հասույթի նշված ծավալից Ծրագրի գործունեության 10 տարիների ընթացքում շահույթը կկազմի 52.553 հզ դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 63.064 հզ դրամ:
<i>Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով</i>	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 25.768 հզ դրամի սկզբնական ներդրումներ, որից մոտավորապես 51%-ը տեղական գնումներն են:
Շարունակական՝ թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կթողարկվի (կմատուցվի) մոտ 782.409 հզ դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Այդ ընթացքում ծրագրի ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 93.889 հզ դրամով:
Հարկերի տեսքով	Հարկային ընդհանուր մասհանումները կկազմեն մոտ 92.220 հզ դրամ: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից, եկամտային հարկից և շահութահարկից:

Այս ծրագիրը կարող է լինել վայրի թեյաբույսերի և դեղաբույսերի չորացման համար նախատեսված հատուկ չորանոցների կառուցման, մթերման, մշակման և արտադրություն կազմակերպելու տիպիկ մոդել՝ ներդրվելով Սյունիքի մարզի 5 համայնքներում:

6. ՎԱՂԱՀԱՍ ԾԻՐԱՆԻ ԵՎ ԴԵՂՁԻ, ԿԻՎԻԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Վաղահաս ծիրանի և դեղձի, կիվիի այգիների վերականգնում ներդրումային ծրագրով առաջարկվում է իրականացնել վաղահաս ծիրանի, դեղձի և կիվիի այգիների հիմնում՝ հաշվի առնելով Սյունիքի մարզի բարենպաստ կլիման: Ծրագրի հաշվարկները կատարվել են 1 հա վրա, որը համամասնորեն կներառի բոլոր 3 տեսակի մրգերը: Այգիներ հիմնելու համար անհրաժեշտ է կատարել հողի մելիորացիայի



աշխատանքներ, պարարտացում, ձեռք բերել տնկիներ: Մելիորացիայի աշխատանքները կախված են քարերի, ցեմենտացված շերտի և հողի անհարթությունների առկայությունից և աստիճանից: Ծրագրի իրականացման հաշվարկներում հիմք է ընդունված քարքարոտ, միջին անհարթություն ունեցող և ցեմենտացված շերտ չունեցող հողերը: Պարարտացումը անհրաժեշտ է բարձր բերքատվություն ապահովելու համար: Ըստ նախնական ուսումնասիրությունների, Մեղրիի տարածաշրջանի հողերի մեծամասնությունը կարիք ունի կոմպլեքս պարարտացման (կալիումական, ֆոսֆորական, ազոտական):



Այգու հիմնադրման 1-ին տարին ամենաձախաստարն է: 1-ին և 2-րդ տարվա ձախսերի մեջ ներառված են նաև ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով պարարտացման ձախսերը: 5-րդ տարում ձախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված կլինի բերքի հսկողության անհրաժեշտությամբ: Մշակության 6-րդ տարվանից պետք է ակնկալել ձախսերի զգալի ավելացում,

պայմանավորված էտի, սրսկման, ոռոգման և թունաքիմիկատների օգտագործման աշխատանքների և նյութերի օգտագործման ավելացման, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով կրկնակի պարարտացման, բերքի վաճառքի, փաթեթավորման և այլ ձախսերի անհրաժեշտությամբ: Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկայի պահանջների կատարման բարելավման միջոցով անհրաժեշտություն կառաջանա բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը՝ արդյունքում կբարձրանա արտադրության արդյունավետությունը: Վաղահաս մրգերի այգիների հիմնումը կարել է իրականացնել հետևյալ համայնքներում:

Աղյուսակ 6.1

Մրգի տեսակ	համայնքներ	հա	1 տնկիի գին/ դրամ	1 ծառի բերքատվությունը/կգ	Տնկիների քանակը 1 հա տարածքի վրա
կիվի	Վարդանիձոր, Կարճևան, Վահրավար, Ալվանք, Շվանիձոր, Կուրիս, Գուդեմնիս,	30	1000	120	250
ծիրան	Սյունիք (Կապան), Վաղատին (Միսիան), Որոտան (Միսիան), Որոտան (Գորիս),	40	500	130	180
դեղձ	Սյունիք, Նոնաձոր, Ալվանք, Շվանիձոր, Վարդանիձոր	40	500	80	600

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐ

Մարզի գյուղատնտեսության առաջնային հիմնախնդիրներից է գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքի իջեցման և արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը: 2010թ Սյունիքի մարզի 2587 հա այգիներից ստացվել է 29,849 ցնտ. համախառն բերք: Նախատեսվում է Միսիանի տարածաշրջանում հիմնել 15 հա պտղատու այգի Դարբասի համայնքում վերակառուցվող պտղի վերամշակման արտադրամասին պտղով ապահովելու նպատակով: Վաղահաս ծիրանի, դեղձի, կիվիի արտադրությունները հնարավորություն կտան ստանալու ցածր ինքնարժեքով արտադրանք: Ներկայումս վաղահաս մթերքներն և կիվին շուկայում ունեն հետևյալ մոտավոր գները.

Աղյուսակ 6.2

Ներկայիս շուկայական գները	Ծրագրի հաշվարկներում ներառված գները
Վաղահաս ծիրան-600-1000դր	Վաղահաս ծիրան-500 դր
Վաղահաս դեղձ-500-1000դր	Վաղահաս դեղձ-500 դր
Կիվի-800-1200դր	Կիվի-900 դր

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ծրագիրը կիրականացվի պետության, մասնավոր ներդրողի և ֆինանսական կազմակերպության համագործակցության շնորհիվ: Ներդրումների մասնաբաժիններն ըստ գումարների և տեսակների ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 6.3

Ներդրումների բաշխվածք				
Մարզ/համայնք		Ներդրող	Վարկ	Ընդամենը
5%		25%	70%	100%
Ֆինանսական	Բնաիրային			
10%	90%			
197,899	1,781,094	9,894,967	27,705,909	39,579,869

Ծրագիրը կիրագործվի որպես մասնավոր սեփականություն և հիմնականում կկառավարի ծրագրի տնօրենը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի 7 հոգուց բաղկացած աշխատակազմ: Աշխատողների քանակը և աշխատավարձերը ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 6.4

Աշխատավարձի հաշվարկ	Թվաքանակ	Աշխատավարձ	Ընդամենը
Ղեկավար անձնակազմ	1	250,000	250,000
Ծառայողներ	1	150,000	150,000
Բանվորներ	4	150,000	600,000
Սպասարկող/տեխնիկական անձնակազմ	1	120,000	120,000
Ընդամենը			1,120,000

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պետական մասնակցությունը նախատեսվում է 5 տոկոսի չափով, բնաիրային կամ ֆինանսական ձևով, որն ուղղված կլինի հողերի կամ տնկիների ձեռք բերմանը: Պետության դերը տվյալ ծրագրում կբարձրացնի ծրագրի դերն ու նշանակությունը ներդրողներ գտնելու գործընթացում:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է Սյունիքի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալների ավելացումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, իրացման խնդիրների լուծումը, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտներն և կկրճատվի աղքատությունը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Աղյուսակ 6.5

Սկզբնական ներդրումներ	Գումար (դր)
Հող	400,000
Տրանսպորտային միջոցներ	2,849,000
Ծառեր	236,000
Պաշարների ձեռք բերում	36,094,869
ԸՆԴԱՄԵՆԸ	39,579,869

ԵԿԱՄՈՒՏ, ԾԱԽՍԵՐ

Ծրագրի եկամուտները ստացվում են վաղահաս մրգերի և կիվիի վաճառքից: Նյութական ծախսերը ներառում են միավոր արտադրանքի ստեղծման համար անհրաժեշտ փոփոխուն ծախսերը: Ամորտիզացիոն հատկացումները հաշվարկված են ըստ ՀՀ հաշվապահական ստանդարտների՝ տրանսպորտային միջոցների համար 20 տոկոս, ծառերի համար 10 տոկոս, շինությունների համար 1-5 տոկոս: Վարկի տոկոսը հաշվարկված է 16 տոկոս տոկոսադրույքի հաշվարկով: Առաջին 5 տարվա ընթացքում ծրագիրը շահույթ չի ապահովի: Քանի որ բերքատվությունը կսկսվի 5 տարվանից, ապա շահույթ կարելի է նախատեսել միայն 5 տարվանից սկսված:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

Ծրագրի իրականացման համար ռիսկերը և վտանգներ են հանդիսանում հետևյալ գործոնները՝

- գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկի առկայության և ապահովագրական համակարգի բացակայությունը
- արտադրանքի իրացման համար տնտեսությունների սակավ հնարավորությունները և դրա իրականացմամբ զբաղվող կառույցների գրեթե բացակայությունը, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը
- գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության պակաս
- գյուղատնտեսական նշանակության մեքենա-սարքավորումների սակավությունը և անկատարությունը

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 6.6

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
<i>Աշխատուժ</i>	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կստեղծվի 10 նոր հիմնական աշխատատեղ: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ առաջին տարվանից սկսած 7 հիմնական աշխատատեղերից, մինչև նշված 10 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կհասնի 12-ի:
Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ	Ծրագրի լրիվ իրագործման պայմաններում, յուրաքանչյուր տարի կապահովվի միջինում 6 ժամանակավոր/սեզոնային աշխատողների ներգրավում
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը գնահատվում է 6.949.950 դրամի շրջանակներում, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 7.645 հզ դրամի չափ:
<i>Տնտեսական արդյունք՝ միկրումակարգակով</i>	
Համախառն հասույթ	Համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 126.783 հզ դրամ, իսկ լավատեսական զարգացումների դեպքում մոտ 139.461 հզ դրամ:
Շահույթ	Համախառն հասույթից Ծրագրի 10 տարիների ընթացքում շահույթը կկազմի մոտ 9.438 հզ դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 10.382 հզ դրամ:
<i>Տնտեսական արդյունք՝ մակրումակարգակով</i>	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 39.579.869 դրամի սկզբնական ներդրումներ:
Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 126.783 հզ դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Սա նշանակում է, որ մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 15.213.948 դրամով
Հարկերի տեսքով	Հարկերի ընդհանուր գումարը կկազմի մոտ 17.242.803 դրամ: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից, եկամտային հարկից և շահութահարկից:

7. ՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԱՓԵՐԻ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Ոչխարաբուծական փոքր և միջին չափերի ֆերմաների հիմնադրում ծրագրով նախատեսվում է ստեղծել տիպային խոշոր ոչխարաբուծական տնտեսություն մինչև 800 անասնազվիաքանակով: Սկզբնական փուլում ձեռք է բերվելու 200 մայրացու ոչխար: 5 տարվա ընթացքում նախատեսվում է այդ թիվը հասցնել 500-ի, իսկ 10 տարվա ընթացքում 800-ի: Սպառումը կիրականացվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում՝ հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունում և արաբական երկրներում: Նախատեսվում է ձեռք բերել բալբաս և տեղական ցեղատեսակների խառնածին ոչխարներ, որոնք իրենցից ներկայացնում են միս-բուրդ-կաթնային ուղղվածության կիսակոպտաբուրդ ցեղատեսակի ոչխարներ: Տվյալ ցեղատեսակն ունի հետևյալ ցուցանիշները.



- բարձր կաթնատվություն (130-140 կգ)
- կաթի բարձր յուղայնություն (6-7%)
- բուրդը կոպիտ է և երկար (մինչև 17սմ)
- մաքուր բրդի ելքը 55-60%
- առանձնանում է բարձր պտղաբերությամբ (երկվորյակների ծնելիությունը մոտ 30%)
- գառների քաշի արագ ավելացում
- խոյերի կենդանի քաշը 55-60 կգ
- մաքիների կենդանի քաշը 45-50 կգ
- կենդանիների մորթելաքաշը կազմում է 50-52%

Մարզի փորձագետների կարծիքով դեռևս կա սեծ սերուժ զարգացնելու հասար ոչխարաբուծությունը Սյունիքի մարզի՝ Միսիանի տարածաշրջանի Նժդեհ համայնքում, Սպանդարյան, Սառնակունք, Գորայք, Կապանի տարածաշրջանի Գեղի համայնքում, Նոր Աստղաբերդում և այլ համայնքներում: Նախնական գնահատականով այս համայնքներում կարելի ոչխարաբուծությունն ավելացնել մոտ 3500 գլխով:

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Խորհրդային ժամանակներում ոչխարների Հայաստանի ազգային հոտը կազմում էր 2.2 մլն գլխաքանակ, որը ապահովում էր հիմնականում բուրդ և միս, ինչպես նաև կաթ և ապահովում էին ՀՆԱ-ում երկրորդ խոշոր մասը: Ներկայիս հոտը կազմում է 480,000-500,000 գլուխ: Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծությունն ավանդաբար զարգացել է մսաբրդակաթնատու ուղղությամբ, ինչը հնարավորություն է ընձեռել օգտագործել ոչ միայն միսը, այլ նաև կաթը, բուրդը, կաշին և այլն, որոնք հումք են հանդիսանում մի շարք արտադրությունների համար:



Սպառողները մեծամասամբ համարում են, որ տեղական արտադրողները հակված չեն օգտագործելու հորմոններ՝ կենդանիների աճն արհեստականորեն խթանելու համար, մինչդեռ ներմուծված արտադրանքը պարունակում է նմանատիպ հավելումներ մեծ չափաբաժիններով: Ավելին, տեղական սպառողները մեծապես գերադասում են հայկական մսամթերքը նաև համային

հատկանիշների պատճառով: Իրանի Իսլամական Հանրապետությունում գառան և ոչխարի մսի միջին շուկայական գինը կազմում է՝

- 1 կգ ոչխարի միս – մոտ 9000 թուման, ինչը համարժեք է մոտ 9 ԱՄՆ դոլարին
- 1 կգ գառան միս – մոտ 12 -13000 թուման, ինչը համարժեք է մոտ 12-13 ԱՄՆ դոլարին
- Համեմատության համար Հայաստանում գառան և ոչխարի մսի միջին գինը կազմում է՝
- 1 կգ ոչխարի միս –2500 ՀՀ դրամ, ինչը համարժեք է մոտ 6 ԱՄՆ դոլարի,
- 1 կգ գառան միս –մոտ 3400 ՀՀ դրամ, ինչը համարժեք է մոտ 8.5 ԱՄՆ դոլարի

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ծրագիրը կարող է լինել մասնավոր սեփականություն: Ծրագիրը հիմնականում կկառավարի ծրագրի տնօրենը, ով նաև ունենա որոշակի փորձ անասնապահության բնագավառում: Այսօր Հայաստանում կա բավարար փորձ ոչխարաբուծության բնագավառում, համագործակցելով Գյուղատնտեսության նախարարության, Ագրոբիզնեսի բարեփոխումների և զարգացման կենտրոնի (CARD) հետ կարելի է բավարար աջակցություն ստանալ ծրագրի կառավարման հարցում:

Ծրագիրը կիրականացվի պետության, մասնավոր ներդրողի և ֆինանսական կազմակերպության համագործակցության շնորհիվ: Ներդրումների մասնաբաժինները ըստ գումարների և տեսակների ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 7.2

Ներդրումների բաշխվածք				
Մարզ/համայնք		Ներդրող	Վարկ	Ընդամենը
6%		45%	49%	100%
Ֆինանսական	Բնաիրային			
10%	90%			
196,200	1,765,800	14,715,000	16,023,000	32,700,000

Աղյուսակ 7.3

Աշխատավարձի հաշվարկ	Թվաքանակ	Աշխատավարձ	Ընդամենը
Ղեկավար անձնակազմ	1	250,000	250,000
Ծառայողներ/պահակներ	1	140,000	140,000
Հովիվներ	2	120,000	240,000
Սպասարկող/տեխ. անձնակազմ	1	110,000	110,000
			740,000

Մորթի ընթացքում շրջական գյուղերից սեզոնային աշխատողներ կվարձվեն, ովքեր հիմնականում կիրականացնեն մորթը: Ոչխարի հոտի ավելացման

հետ կավելացվեն նաև հիմնական աշխատողների թիվը: Անհրաժեշտ կլինի կառուցել գոմեր նվազագույնը 1,2 -1,5 ք.մ տարածք մեկ ոչխարի հաշվով: Արոտավայրերի վարձակալության գումարը հաշվարկված է տարեկան 1 հա-ի համար 10-12 000 դրամ: Այս ծրագրով նպատակ է դրվում

- ավելացնել մսի, կաթի, արտադրության ծավալները,
- բարձրացնել արտադրության արդյունավետությունը,
- մեծացնել անասնապահական մթերքների ապրանքայնությունը:

Աղյուսակ 7.4

Սկզբնական ներդրումներ	Գումար
Հող	1,000,000
Շինություն/գոմեր	20,000,000
Տրանսպորտային միջոցներ	3,000,000
Անասուններ	6,180,000
Պաշարների ձեռք բերում	2,520,000
ԸՆԴԱՄԵՆԸ	32,700,000

Գումին կից հարկավոր է կառուցել տարածք, որը կբավարարի ոչխարների 90-օրյա կերակրման պահանջները բավարարելու նպատակով կեր պահելու համար: Այս կերը կարող է ներառի գարի, չոր խոտ, քարաղ:

ԵԿԱՄՈՒՑ ԾԱԽՍԵՐ

Ծրագրի եկամուտների մեծ մասը ստացվում են ոչխարի մսի վաճառքից: Եկամուտներ են ստացվում նաև ոչխարի կաթի, կաշվի և բրդի վաճառքից: Ամորտիզացիոն հատկացումները հաշվարկված են ըստ ՀՀ հաշվապահական ստանդարտների՝ տրանսպորտային միջոցների համար 20 տոկոս, շինությունների համար 1-5 տոկոս: 1 տարվա ընթացքում կկատարվեն որոշակի ծախսեր, իսկ 2 տարվանից կսկսվի հասույթի ստացումը, 4 տարվանից հետո ծրագիրը կդադանա շահութաբեր:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում ոչխարաբուծությունը զարգանում է իր իրական հնարավորությունների 30-40%-ի սահմաններում: Ոչխարների ամենաշատ գլխաքանակն կենտրոնացված է Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի և Սյունիքի մարզերում: Ստորև ներկայացվում է ՀՀ-ում արոտավայրերի ծանրաբեռնվածությունը (1982-2009թթ.) 1 հեկտարի հաշվով՝ ըստ մարզերի:

Աղյուսակ 7.5

Մարզերի անվանումը	Ընդամենը ոչխար և այծ, գլուխ		Ընդամենը արոտներ, հա	Արոտների ծանրաբեռնվածությունը գլուխ/հա	
	1982թ.	2009 թ.		1982թ.	2009թ
Արագածոտն	319075	93372	70779	4,5	1,3
Արարատ	144037	71852	44072	3,3	1,6
Արմավիր	79720	64625	12974	6,1	5,0
Գեղարքունիք	480975	105779	118489	4,1	0,9
Լոռի	225413	40277	100459	2,2	0,4
Կոտայք	138731	58426	53597	2,5	1,1
Շիրակ	333638	86105	65454	5,1	1,3
Սյունիք	264546	67282	131511	2,0	0,5
Վայոց Ձոր	175836	19661	48626	3,6	0,4
Տավուշ	81558	25085	47593	1,7	0,5
Ք. Երևան	4448	4637	461	9,6	10
Ընդամենը	2256350	637101	694015	3,2	0,9

(Աղբյուրը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն)

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

- Հայաստանում լուրջ մտավախության առիթ է հանդիսանում բրուցելյոզի գերակայումը (որն առաջանում է *Brucella melitensis* հարուցիչի հետևանքով),
- շատ վայրերում հողի սեփականության պակաս և արոտավայրերի հետ կապված ծախսեր, ինչպես նաև երկարաժամկետ անվտանգություն,
- վատ անասնապահություն և կառավարման հմտություններ,
- կիրառվող առողջապահական միջոցառումների պակաս, որը հանգեցնում է համաճարակային հիվանդությունների առաջացման, մասնավորապես բրուցելյոզի,
- դեգրադացված արոտավայրեր,
- կերակրի կառավարման թույլ պրակտիկա,
- արյունակցական տրամախաչում, որը հանգեցնում է թույլ գենետիկ բազայի,
- թույլ տրանսպորտային ենթակառուցվածք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 7.6

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
Աշխատուժ	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կստեղծվի 5 նոր հիմնական աշխատատեղ: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ առաջին տարուց սկսած 5 հիմնական աշխատատեղերից, մինչև նշված 7 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կհասնի 12-ի:
Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ	Ծրագրի լրիվ իրագործման պայմաններում յուրաքանչյուր տարի կապահովվի միջինում 8 ժամանակավոր/սեզոնային աշխատողների ներգրավում
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը գնահատվում է առնվազն 13.775.795 դրամ, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 16.530.953 դրամ
Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով	
Համախառն հասույթ	Ընդհանուր համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 411.185.525 դրամ, իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ 493.422.630 դրամ
Շահույթ	Նշված 411.185.525 ծավալից Ծրագրի 10 տարիների ընթացքում 80.234.709 դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 96281651 դրամ:
Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 32.700.000 դրամի սկզբնական ներդրումներ՝ տեղական գնումների տեսքով:
Շարունակական՝ թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 411.185.525 դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Սա նշանակում է, որ մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 49.342.263 դրամով
Հարկերի տեսքով	Հարկային ընդհանուր մասհանումները կկազմեն 48.081.719 դրամ՝ ամբողջ իրագործման ընթացքում: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից, եկամտային հարկից և շահութահարկից (շահույթ x 20%)

8. ԲԱՆՋԱՐԱԲՈՍՏԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԾԱՂԿԻ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Բանջարաբոստանային մշակաբույսերի և ծաղկի ջերմոցային տնտեսությունների հիմնադրման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի ներդրումներ կատարել 1000 քմ տարածքով ջերմոցներ կառուցելու, սածիլներ գնելու, էլեկտրականության գազի և ջրամատակարարման պայմաններ ստեղծելու համար: Ծրագրի նպատակը 1000 քմ տարածում ծաղիկներ՝ վարդ, մեխակ և բանջարաբոստանային մշակաբույսեր լոլիկ, վարունգ աճեցնելն է: Ծրագրի իրականացման արդյունքում 1000 քմ տարածքից կարող է ստացվել 11000 կգ բանջարեղեն և 125,000 հատ ծաղիկ:

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ



ՀՀ-ում ջերմոցների մեծամասնությունը կառուցված են Արարատյան դաշտում, սակայն մեծ ներուժ կա ջերմոցներ ստեղծելու համար նաև Սյունիքի մարզում: Ներկայումս Հայաստանում գործում են մոտ 120-130 հա ջերմատներ: Ջերմոցների մեծամասնությունը՝ մոտ 60%-ը, մասնագիտացված են բանջարեղենի արտադրության մեջ, իսկ 40%-ը՝ ծաղիկներ աճեցնելու մեջ: Հայաստանի ջերմոցային տնտեսությունները ձմեռային սեզոնին ապահովում են ներքին շուկայի բանջարեղենի նկատմամբ պահանջարկի 45 տոկոսը: Եվրոպայում մեկ բույսի վեգետացիոն շրջանը մոտ 9 ա-

միս է, որով էլ պայմանավորված է բարձր բերքատվությունը: Հայաստանում բանջարեղենի արտադրողականությունը կազմակերպվում է տարվա մեջ երկու անգամ: Հիմնականում ջերմոցային տնտեսություններում արտադրում են 4 տեսակի բանջարեղեն, որոնք ներկայացված են ըստ իրենց բաժնեմասերի գծագիր 1-ում: Ջերմոցային բանջարեղենների գները հետևյալն են՝

- Լոլիկ-750-1200 դրամ
- Վարունգ-850-1500 դրամ

ԾԱՂԿԱՅԻՆ ՋԵՐՄՈՑՆԵՐ



Հայաստանյան շուկայում վաճառվող ծաղիկները երկու տեսակի են՝ տեղական և ներկրված: Ջերմոցային ծաղիկները գները խիստ կախված են այն հանգամանքից, թե արդյոք դրանք ներկրված են, թե արտադրված են տեղական շուկայում: Տեղական ջերմոցային ծաղիկներն ունեն հետևյալ գները՝

- Վարդ-200-700 դրամ
- Մեխակ-100-150 դրամ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ծրագիրը կիրականացվի պետության, մասնավոր ներդրողի և ֆինանսական կազմակերպության համագործակցության շնորհիվ: Ներդրումների մասնաբաժինները ըստ գումարների և տեսակների ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 8.1

Ներդրումների բաշխվածք				
Մարզ/համայնք		Ներդրող	Վարկ	Ընդամենը
5%		55%	40%	100%
Ֆինանսական	Բնաիրային			
10%	90%			
353,302	3,179,718	38,863,220	28,264,160	70,660,400

Ծրագիրը կիրագործվի որպես մասնավոր սեփականություն և հիմնականում կկառավարի ծրագրի տնօրենը: Կառավարման համար անհրաժեշտ կլինի տիրապետել ջերմոցային տնտեսությունների արդյունավետ կառավարման և ծախսերի կրճատման նպատակով ստեղծված նոր տեխնոլոգիաներին, բուսաբուծական և այլ գյուղատնտեսական տվյալներին: Տնօրենը պետք է համատեղ աշխատի միջազգային և տեղական ոլորտային կազմակերպությունների հետ, որոնք կարող են աջակցել ոչ միայն նորարական տեխնոլոգիաների կառավարմանը, այլ նաև կարող են աջակցել արտադրանքի իրացմանը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի 7 հոգուց բաղկացած աշխատակազմ: Աշխատողների քանակը և աշխատավարձերը ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 8.2

Աշխատավարձի հաշվարկ	Թվաքանակ	Կեղտոտ աշխատավարձ	Ընդամենը
Ղեկավար անձնակազմ	1	300,000	300,000
Ծառայողներ	2	150,000	300,000
Բանվորներ	3	120,000	360,000
Սպասարկող/տեխնիկական անձնակազմ	1	130,000	130,000
			1,090,000

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի նաև ձեռք բերել «Գազել» մակնիշի ավտոմեքենա տեղափոխման աշխատանքների իրականացման համար:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը համահունչ է «Հայկական բերքի առաջնության կենտրոն» (ՀԲԱԿ) ՓԲԸ-ի գործունեության ռազմավարությունը բանջարաբուծության ոլորտում, որը նախատեսում է ստեղծել բանջարեղենի արտադրությամբ և արտահանմամբ զբաղվող, ժամանակակից տեխնոլոգիական հագեցվածությամբ՝ պահեստային և սառնարանային տնտեսություններով, տեսա-

կավորման և փաթեթավորման կարողություններով համալրված 500 հա ջեռուցվող և 1500-2000 հա չջեռուցվող ջերմատներ: Այս ծրագրի իրագործումը կլուծի նաև մի շարք այլ կարևոր խնդիրներ.

- կապահովվի մարզի բնակիչները կլուծի նաև մի շամդմանումը
- կավելացնի հյուսիսային տեսակա նախագծերը կլուծի նաև յուրատեսակա նախագծերը կլուծի ն,
- կբարձրացնի սարքավորումները, դրամավերականգնումները կլուծի նաև մը էապես- նավերտարածակապես վերականգնումները կլուծի նաև մի շամդմա
- արտադրատեսակների իրները կլուծի նաև մը
- արդյունավետ կներդրվի կոգտագործվի իտագործվեց կներդրվի իրները կլուծի նաև մի շամդ- ման կենտրոն» (ՀԲԱԿ) ՓԲԸ-ի գործունեության ռազմավարությունը բանջարաբուծու- թյան ոլորտում, որը նախատեսում է ստեղծել բանջա

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աղյուսակ 8.3

Սկզբնական ներդրումներ	Գումար
Հող	400,000
Ջերմոցներ	61,050,000
Տրանսպորտային միջոցներ	4,884,000
Պաշարների ձեռք բերում	4,326,400
ԸՆԴԱՄԵՆԸ	70,660,400

Գյուղատնտեսական նշանակության հողերի գները Սյունիքի մարզում խիստ տատանվում են ըստ համայնքների: Հաշվարկները կատարված են հիմք ընդունելով 1000 քմ համար 400.000 դր: Ջերմոցների կառուցման համար անհրաժեշտ են ապակի, գազատարներ, ջրամատակարարման խողովակներ, հող և այլ շինարարական նյութեր:

Պաշարները ներառում են սածիլները, պարարտանյութերը, բժշկական նյութերը և այլն:

ԵԿԱՄՈՒՑ ԾԱԽՍԵՐ

Ծրագրի եկամուտները ստացվում են ծաղիկների և բանջարաբուստանային մշակաբույսերի վաճառքից: Նյութական ծախսերը ներառում են միավոր արտադրանքի ստեղծման համար անհրաժեշտ փոփոխուն ծախսերը: Ամորտիզացիոն հատկացումները հաշվարկված են ըստ ՀՀ հաշվապահական ստանդարտների՝ տրանսպորտային միջոցների համար 20 տոկոս, շինությունների համար 1-5 տոկոս: Առաջին տարվա ընթացքում ծրագիրը շահույթ չի ապահովի, հետագայում, 2 տարվանից հետո կդառնա շահութաբեր:

Պետական մասնակցությունը տվյալ ծրագրում նախատեսվում է 5 տոկոսի չափով, բնաիրային կամ ֆինանսական ձևով, որն ուղղված կլինի հողերի ձեռք բերման, կամ սերմերի մասնակի սուբսիդացմանը:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

Գյուղատնտեսական ռիսկը կապված է բերքատվության հիվանդության հետ: Ջերմոցային տնտեսությունները նաև խիստ կախվածություն ունեն գազի մատակարարման հետ: Այս ռիսկը ջերմոցային տնտեսությունները կարող են որոշ չափով հեջավորել գազը փոխարինելով էլեկտրականության՝ ջեռուցում ապահովող գեներատորների, այլ սարքավորումների միջոցով: Օրինակ՝ ջերմության ծախսերը կրճատելու նպատակով կարող է տեղակայվել ջերմությունը տնտեսող “Ludvig Svenson” տիպի “շերտավարագույր”, որի շնորհիվ մոտ 20-30% չափով ջերմության խնայողություն կարող է տեղի ունենալ:

Բերքատվությունը խիստ կապված է սերմացուի ճիշտ ընտրության հետ: Նորաստեղծ ընկերությունները կարող են համագործակցել ջերմոցային տնտեսություններին աջակցող ենթակառուցյունների հետ՝ միջազգային կազմակերպությունների, Ջերմոցային ասոցիացիայի հետ, որպեսզի կարողանան տեղեկացված և հմուտ կառավարում կազմակերպել ճիշտ սերմացուներ ընտրելու, հիվանդությունների դեմ պայքարելու, նոր տեխնոլոգիաներ ներդնելու հարցերում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 8.4

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
<i>Աշխատուժ</i>	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կստեղծվի առնվազն 10 նոր հիմնական աշխատատեղ: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ սկսած 7 աշխատատեղերից, մինչև նշված 10 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կհասնի 12-ի:
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը գնահատվում է մոտ 15.218 հզ դրամ, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 18.262 հզ դրամի չափով:
<i>Տնտեսական արդյունք՝ միկրոմակարդակով</i>	
Համախառն հասույթ	Ընդհանուր համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 352.033 հզ դրամ, իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ ընդամենը 44.185 հզ դրամ :
Շահույթ	Շահույթը Ծրագրի 10 տարիների ընթացքում կկազմի մոտ 22.941հզ դրամ, իսկ լավատեսական սցենարի դեպքում՝ 26.382 հզ դրամ:
<i>Տնտեսական արդյունք՝ մակրոմակարդակով</i>	
Միանվագ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 70.660 հզ դրամի սկզբնական ներդրումներ՝ տեղական գնումների տեսքով՝ ներառյալ շինարարությունը:

<p>Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով</p>	<p>Ծրագրի գործողության 10 տարիների ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 352.033 հզ դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 42.244 հզ դրամով:</p>
<p>Հարկերի տեսքով</p>	<p>Հարկերի ընդհանուր կկազմի մոտ 38.955.867 դրամ: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից, եկամտային հարկից և շահութահարկից (շահույթ x 20%):</p>

Առաջարկվում է ընդլայնել աշխարհագրական գոտին ամբողջ Սյունիքի մարզում՝ մասնավորապես Կապան, Սյունիք, Որոտան/Գորիս/, Քարահունջ, Շաքի համայնքներում, Ագարակում, Կապանի քաղաքամերձ համայնքներում (7 համայնքներում)՝ հիմնելով 1000 քմ տարածքով ջերմոցներ:

9. ՊԱՀԱԾՈՅԱՑՄԱՆ ՓՈՔՐ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Պահածոյացման փոքր արտադրամասերի հիմնադրման ծրագիրը նախատեսում է նոր ձեռնարկությունների հիմնադրում, ներկայումս չաշխատողների ձեռքբերում և վերագործարկում, ինչպես նաև տարածաշրջանում գործող փոքր արտադրամասերի միաձուլում: Տվյալ ծրագիրը մոդելային է, որով առաջարկվում է արտադրամասեր հիմնել Սյունիքի մարզի հետևյալ ենթատարածաշրջաններում/համայնքներում.

- Կապան
- Մեղրի (Լեհվազի համայնք)
- Գորիս (Հարժիսի համայնք)

Ընդհանուր առմամբ տվյալ ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 63 մլն դրամի ներդրում: Վերջնական թողարկվող արտադրանքի տեսականին կարող է ներառել հետևյալ ապրանքատեսակները.

- նռան հյութ,
- թզի մուրաբա/ջեմ,
- ընկույզի մուրաբա,
- հոնի հյութ/մուրաբա,
- մոշի հյութ/մուրաբա,
- խնձորի հյութ/ջեմ,
- տանձի հյութ/մուրաբա,
- բալի հյութ/մուրաբա,
- կեռասի մուրաբա,
- սալորի հյութ/մուրաբա,
- դեղձի հյութ/մուրաբա:

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Մրգային հյութերի և զանազան մուրաբաների շուկան ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ աշխարհում կայուն աճի միտում ունի: Վերջինս հատկապես վերաբերվում է բնական արտադրատեսակներին, ինչի վրա էլ պետք է դրվի շեշտը տվյալ ծրագրի իրականացման պարագայում: Տարբեր բիզնես ծրագրերում նպատակային շուկաների բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պահանջարկ են վայելում հատկապես այն արտադրատեսակները, որոնց արտադրությամբ միշտ էլ զբաղվել է Սյունիքի մարզը, մասնավորապես՝ Մեղրիի պահածոների գործարանը: Տվյալ արտադրամասերի նպատակային շուկաներ պետք է հանդիսանան ինչպես տեղականը, այնպես էլ ԱՄՆ-ի, ԱՊՀ և Եվրոմիության երկրները: Հարկ է հատուկ ընդգծել, որ ԱՄՆ-ի և Եվրոմիության դեպքում բնական/օրգանիկ սննդամթերքը մեծ պահանջարկ է վայելում և ձեռնարկության շուկայավարման քաղաքա-



կանության մեջ ու բրենդային իմիջը առաջխաղացնելիս հարկ է անպայման շեշտադրել տվյալ հանգամանքը: Տեղական շուկայի հաճախորդների խմբեր կարելի է դիտարկել ուսումնական հաստատությունները, ՀՀ ՊՆ, քաղաքային բնակչությունը՝ հիմնականում Երևան քաղաքը:

ԱՊՀ շուկայի դեպքում ապագա հաջողության լուրջ գրավական կհանդիսանա մուտքը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայի ու Ուկրաինայի մեծածախ շուկաներ՝ գործընկեր կազմակերպությունների հետ գործարար կապերի հաստատման շնորհիվ:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Կազմակերպական իրավական տեսակետից տվյալ արտադրամասերը լինելու են Փակ Բաժնետիրական Ընկերություններ (ՓԲԸ), որում ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս Սյունիքի մարզպետարանի, հանդիսանալու է համահիմնադիր մասնավոր ներդրողի և վարկային կազմակերպության հետ մեկտեղ՝ 20/50/30 բաժնեմասային հարաբերակցությամբ: ՀՀ Կառավարության մասնակցությունը ծրագրի իրականացմանը ենթադրում է միայն ֆինանսական բնույթի ներդրումներ՝ ՓԲԸ-ի հիմնադիր սեփականատիրոջ կարգավիճակով, հետագայում տվյալ ծրագրից դուրս գալու ռազմավարությամբ: Մասնավորապես, ծրագրի ներդրումների կառուցվածքում պետության մասնաբաժինը կազմում է 20 %, որը ամբողջությամբ ֆինանսական բնույթի է (մոտ 12,543 մլն դրամ): Հետագայում՝ երբ ձեռնարկությունները դուրս գան շահութաբերության ակնկալվող մակարդակի, Կառավարությունը դուրս է գալու տվյալ բիզնեսից՝ վաճառելով իր փայր մեկ այլ շահագրգիռ կողմի:

Ըստ կատարված հաշվարկների նախատեսվում է, որ ներդրումների ամբողջ ծավալում Կառավարության օպտիմալ չափաբաժինը կազմում է 20 %՝, որը ամբողջովին ֆինանսական բնույթի է և կազմում է 12 543 330 դրամ: Մասնավոր ներդրողի օպտիմալ չափաբաժինը կազմում է 50 %՝ 31 358 325 դրամ: Ծրագրով անհրաժեշտ մնացած չափաբաժինը՝ 30 %-ը (18 814 995 դրամ) նախատեսվում է իրականացնել վարկային միջոցների ներգրավման շնորհիվ:

Ըստ իրականացման ուղղությունների, ներդրումների բաշխվածքն ունի հետևյալ տեսքը.

1. Հող, շենքեր/շինություններ և/կամ շենքային պայմանների բարելավում – համաձայն մարզային մասնագետների և փորձագետների հետ ունեցած զրույցների տվյալ ֆորմատով ծրագրի պարագայում նպատակահարմար է հողի և շենք/շինությունների վարձակալության տարբերակը ինչը նշանակում է, որ այս հողվածով ծախսեր չեն կատարվելու:

Աղյուսակ 9.2

N	Սարքավորման անվանումը	Ընդհանուր քանակը
1	Գոլորշու/շոգու ավտոկլավ	1
2	Ապակյա տարաների լվացման մեքենա	1
3	Զմռտող կիսավտոմատ սարք	1
4	Մածուցիկ արտադրանքի չափաբաժանարար սարք	1
5	Ապակյա տարայի մանրէազերծման սարք	1
6	Եռացնող սարք (blancher)	1
7	Մաքրող և կտրատող մեքենա	1
8	Պտուղ-բանջարեղենի մաքրման մեքենա	1

2. **Ձեռքբերվող սարքավորումներ.** պահածոյացման տիպային մինի գործարան իր անհրաժեշտ սարքավորումներով կարելի է ձեռք բերել, օրինակ, Ռուսաստանի Դաշնության շուկայում առկա արտադրողներից (օրինակ՝ Պրոդմաշ գործարան ՓԲԸ, Բելգորոդ քաղաք)՝ 8 750 500 դրամի սահմաններում: Մինի գործարանը ներառում է հետևյալ սարքավորումները.

Այսպիսով, սույն գործարար ծրագրով նախատեսվող պահածոյացման 3 փոքր արտադրամասերի պարագայում ձեռք բերվող սարքավորումների ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 26,251,500

3. Ձեռք բերվող տրանսպորտային միջոցներ.

Աղյուսակ 9.3

N	Տրանսպորտային միջոցի անվանումը/նշանակությունը	Ընդհանուր քանակը	Միավորի շուկայական գինը (հզ դրամ) *	Ընդհանուր գումար (հզ դրամ)
1	GA3-3302 "ГАЗель" /բորտային/	1	4 070 000	4 070 000
2	GA3-2705 "ГАЗель" /ֆուրգոն/	1	4 070 000	4 070 000
Ընդամենը՝				8 140

Այսպիսով, սույն ծրագրով նախատեսվող պահածոյացման 3 փոքր արտադրամասերի համար ձեռք բերվող տրանսպորտային միջոցների ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 24,420,000

4. Աշխատուժի հանդեպ պահանջների տեսակետից, սկզբնական ժամանակաշրջանում վերոհիշյալ 3 արտադրամասերի բնականոն աշխատանքի ապահովման տեսակետից (աշխատավարձերի վճարում, և այլն) անհրաժեշտ է շուրջ 9 420 000 դրամ ներդրում:

5. Հումքի և պաշարների ձեռքբերման տեսակետից, համաձայն հաշվարկների անհրաժեշտ է 2 625 150 դրամ ներդրում:

Կառավարման թիմ

Աղյուսակ 9.4

Հաստիքի անվանում	Քանակ	Մշտական
Տնօրեն	1	1
Գլխավոր ճարտարագետ/տեխնոլոգ	1	1
Ֆինանսիստ/հաշվապահ	1	1

Արտադրամասերի բնականոն աշխատանքի և առկա սարքավորումների տեխնիկական սպասարկման համար ձեռնարկության աշխատանքային անձնակազմի մասնագիտական և քանակական բաշխվածքը կունենա հետևյալ տեսքը.

Աղյուսակ 9.5

Հաստիքի անվանում	Քանակ	Մշտական	Ժամանակավոր/ սեզոնային	Որակավորված
Արտադրության պետ	1	1	-	1
Բանվորներ/մասնագետներ	17	17	-	17
Սպասարկող/տեխնիկական անձնակազմ	2	2	-	2

Արտադրամասերի անխափան և բնականոն գործունեության համար անհրաժեշտ արտադրական հումքը ամբողջությամբ տեղական է լինելու: Տեխնոլոգիական պրոցեսին անհրաժեշտ քիմիական ծագման որոշ նյութեր և կոնսերվանտներ ձեռք կբերվեն արտերկրից: Ձեռնարկությունների ապագա կենսագործունեության հաջողության լուրջ գրավական է հանդիսանում սարքավորումների և պահեստամասերի մատչելիությունը՝ ինչպես գնային, այնպես էլ շուկայի հասանելիության իմաստով: Այս տեսակետից էլ շեշտը դրվել հենց հիմնականում ռուսական/ՄՊՀ արտադրության սարքավորումների և պահեստամասերի վրա (օրինակ՝ Պրոդմաշ գործարան ՓԲԸ, Բելգորոդ, ՌԴ):

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝ մարզում բուսաբուծական և անասնապահական մթերքների ծավալների ավելացումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, և իրացման հիմնախնդիրների լուծումը՝ գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով, և այս ամենի արդյունքում գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացումը ու գյուղական բնակավայրերում աղքատության կրճատումը:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

- Որակյալ մասնագիտացված աշխատուժի պակաս,
- վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առաջացում,
- պետական ոչ բարենպաստ քաղաքականություն,
- երաշտի պատճառով արտադրական կարողությունների թերբեռնում,
- գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների սակավության/բացակայության, ինչպես նաև վարկային (փոխառու) միջոցների սղության/անմատչելիության պատճառով մթերվող պտղի անբավարար ծավալներ,

- ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վատ որակի պատճառով գյուղացու համար մատչելիության դժվարություն ինչպես նաև սեփական տեխնիկայի շարքից դուրս գալը/վնասումը,
- գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության հետ կապված խնդիրների պատճառով տվյալ ձեռնարկության ծառայությունների մասին անտեղյակությունը,
- գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկայնության, տվյալ ոլորտի ապահովագրական համակարգի բացակայության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հետ կապված խնդիրների պատճառով տարածամկետ վարձավճարների վճարման հետ կապված խնդիրներ,
- գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով մթերման համար անհրաժեշտ պտղի սակավություն և որպես հետևանք՝ արտադրական կարողությունների թերբեռնում և աշխատուժի թերբեռնված օգտագործում,
- ներքին շուկայի և մրցակիցների կառուցվածքի փոփոխություն,
- արտահանման խոչընդոտներ,
- արտաքին շուկայի ոչ բարենպաստ կոնյունկտուրա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 9.6

Ցուցանիշ	Ազդեցության գնահատական
<i>Աշխատուժ</i>	
Հիմնական աշխատատեղերի թվաքանակ	Ծրագրի գործողության 15 ¹ տարիների ընթացքում կստեղծվի առնվազն 69 նոր հիմնական աշխատատեղ: Այդ թվին ծրագիրը կհասնի աստիճանաբար՝ երկրորդ տարուց սկսած 35 հիմնական աշխատատեղերից, մինչև նշված 69 թիվը: Լավատեսական զարգացումների դեպքում այդ թիվը կհասնի 72-ի
Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ	Ծրագրի լրիվ իրագործման պայմաններում, յուրաքանչյուր տարի կներգրավվի միջինում 5-10 ժամանակավոր/սեզոնային աշխատող :
Աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձին ուղղվող ընդհանուր միջոցների գումարը կազմում է մոտ 2,439,240 հզ դրամի շրջանակներում, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում՝ 2,561,202 հզ դրամի չափ:
<i>Տնտեսական արդյունք՝ միկրումակարգակով</i>	
Համախառն հասույթ	Ընդհանուր համախառն հասույթը գնահատվում է մոտավորապես 9,296,867 հզ դրամ, իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ 10,691,397 հզ դրամ
Շահույթ	Ծրագրի 15 տարիների ամբողջ ընթացքում շահույթը կկազմի 1,408,664 հզ դրամ, իսկ լավատեսականի դեպքում՝ 1,619,963 հզ դրամ:
<i>Տնտեսական արդյունք՝ մակրումակարգակով</i>	
Միանվագ՝ սկզբնական ներդրումների տեսքով	Ծրագրի իրագործման արդյունքում կկատարվեն 612,166 հզ դրամի սկզբնական ներդրումներ, որից մոտավորապես 84%՝ (514,651 դրամ արժողությամբ) տեղական գնումներն են՝ ներառյալ շինարարությունը:
Շարունակական թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների տեսքով	Ծրագրի գործողության 15 տարիների ամբողջ ընթացքում կթողարկվի (կմատուցվի) 9,296,867 հզ դրամի արտադրանք (ծառայություն), որի ավելացված արժեքի մասը գնահատվում է 10-15%: Մարզի ՀՆԱ-ն այդ ընթացքում ծրագրի միայն ուղղակի ազդեցության շնորհիվ կավելանա մոտ 1,115,624 հզ դրամով
Հարկերի տեսքով	Հարկերի ընդհանուր կկազմի 984,511 հզ դրամ: Այդ գումարը բաղկացած է ԱԱՀ-ից (92,968, հզ դրամ), եկամտային հարկից (609,810 հզ դրամ) և շահութահարկից (281,732 հզ դրամ):

¹ - Քանի որ ծրագրի առաջին 7 տարիների ընթացքում շահութաբերության ցուցանիշը բացասական է, հաշվարկը կատարվել է 15 տարիների կտրվածքով

10. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ, ԻՆՏԵՆՍԻՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

Ավանդական գյուղատնտեսության խթանում, ինտենսիվ գյուղատնտեսության կենսագործում ծրագրերով նախատեսվում է, որ պետությունը առկա անջրտի հողային ռեսուրսների օտարման-վաճառքի պայմանագրեր է կնքում հետաքրքրություն դրսևորած Ներդրողների Միավորման (pool of investors) հետ: Մա թույլ կտա պետության կողմից իրականացվող ինֆրակառուցվածքային աշխատանքներին զուգահեռ հողերի բերքատվության բարձրացման և ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման առումով իրականացնել անհրաժեշտ ներդրումներ: Այս ամենի շնորհիվ Մեղրու տարածաշրջանի սարերի լանջերին հողերը ևս կդառնան մշակովի, ինչպես նաև լրացուցիչ խթան կհանդիսանա արքայանարինջի, նռան և թուզի կուլտիվացման համար: Դիտարկելով ստորև բերված աղույակը, կտեսնենք տվյալ տարածաշրջանի այն բնակավայրերը, որոնք ունենալով ռոռգման ենթակա հողեր և լրացուցիչ եկամտի ներուժ պարունակող զգալի հողատարածքներ, ներկայումս չեն ռոռգվում:

Աղյուսակ 10.1

Տարածքներ/համայնքներ	Մոտավոր տարածքներ, հա	Հիմնական մշակաբույսեր
Մեղրի	25.0	Արքայանարինջ, նուռ, թուզ
Ագարակ	20.0	Արքայանարինջ, նուռ, խաղող, թուզ, սերկևիլ
Ալվանք	47.0	Արքայանարինջ, նուռ, խաղող, ծիրան, թուզ, ձիթապտուղ
Շվանիձոր	5.0	Նուռ, արքայանարինջ, խաղող, թուզ
Նոնաձոր	11.5	Նուռ, խաղող
Լեհվազ	25.0	Արքայանարինջ, ընկույզ
Վարդանիձոր	17.0	Ընկույզ, արքայանարինջ

Աղյուսակ 10.2

Պտուղ/մշակաբույս	Բազմապատկիչ գործակիչ
Արքայանարինջ	1.3
Նուռ	1.4
Խաղող	1.4
Թուզ	1.2
Ձիթապտուղ	1.3
Սերկևիլ	1.3

Ներկայացվող բազմապատկիչ գործակիցների աղույակը ցուցադրում է, թե միայն ռոռգման շնորհիվ (առանց հաշվի առնելու մնացած այլ գործոններն, ինչպիսիք են սպառումը, մթերումը, կլիմայական տատանումները և այլն) բերքի ընդհանուր ծավալը (բնականաբար, միջինը՝ տարբեր բնակավայրերի համար)՝ ինչքանով կավելանա միջնաժամկետ (2-3 տարի) հեռանկարում:

Տվյալ ծրագրի իրագործմամբ Մեղրու տարածաշրջանում հնարավոր է դառնում կենսագործել ինտենսիվ գյուղատնտեսության ծրագիրը: Նշենք, որ օրինակ, 1000 ք.մ.-ի վրա նռան մշակության դեպքում գյուղացու կողմից ստացվող մաքուր եկամուտը ավելանում է մոտ 2,8 անգամ, նույնիսկ եթե բոլոր աշխատանքների համար օգտագործվի վարձու աշխատուժ, և մեկ հեկտար մշակելու պարագայում այն կազմում է մոտ 7,5 մլն դրամ: Արքայանարինջի մշակման պարագայում՝ 2 անգամ, իսկ մեկ հեկտար մշակելու դեպքում կարելի է ստանալ

մոտ 18 մլն. դրամի մաքուր եկամուտ: Թզենու մշակության պարագայում մաքուր շահույթը ավելանում է մոտ 3 անգամ, իսկ մեկ հեկտարի մշակելու դեպքում կարելի ստանալ մոտ 26 մլն դրամի շահույթ:

Աղյուսակ 10.3

Մշակաբույս	Խողովակա-ակոսային	Կաթիլային
Թուզ	0-5%	15-20%
Արքայանարինջ	0-5%	20-25%
Նուռ	0-5%	15-20%
Խաղող	0-5%	20-25%

Գյուղատնտեսության վարման առկա փորձը ցույց է տալիս, որ ոռոգման եղանակից շատ բանով կախված է այգիների բերքատվությունը: Այսօր Մեղրիի տարածաշրջանում հիմնականում օգտագործվում է ոռոգման ակոսային եղանակը, որի արդյունավետությունն իմաստ ունի համեմատել խողովակաակոսային և կաթիլային եղանակների հետ: Նշված

մշակաբույսերից արքայանարինջը և խաղողը ավելի շատ “ջրապահանջ” են մյուսների համեմատ, հետևաբար, ավելի հավասարաչափ ոռոգելու դեպքում /կաթիլային համակարգով/, կտան ավելի բարձր արդյունք:

Այժմ անդրադառնանք այն հիմնական ռեզիոններին որտեղ կիրառելի են ինտենսիվ գյուղատնտեսության վարման համար հայտնի ոռոգման համակարգերը²:

- **Մակերեսային ոռոգման համակարգ** - այժմ չի կիրառվում, իսկ ԽՍՀՄ-ի գոյության ժամանակ ոռոգման նշված եղանակը կիրառվել է արոտավայրերի ոռոգման համար լեռնային գոտում՝ Լիճք, Տաշտուն, Վանք, Կալեր:
- **Անձրևացում** - նույնպես չի կիրառվում, սակայն ԽՍՀՄ ժամանակաշրջանում կիրառվել է լեռնային գոտում՝ Տաշտուն և Լիճք համայնքների հողատարածքներում:
- **Ակոսային** - Մեղրիի տարածաշրջանում հիմնական ոռոգման տեսակը: Ոռոգման համակարգը մասամբ սպասարկվում է Մեղրիի ՋՕԸ-ի կողմից, լեռնային գոտում գտնվող համայնքները (Տաշտուն, Լիճք, Լեհվազ, Վարդանիձոր, Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար, Կարճևան, Ագարակ և Մեղրի քաղաքները) մասամբ ոռոգվում են նաև ինքնահոս ջրով Մեղրի գետից:
- **Խողովակա-ակոսային** - համակարգը տեղադրված է 1 ֆերմերի այգետարածքում /մոտ 1 հա, ք. Մեղրի, Ի. Ասլանյան/
- **Կաթիլային** - տեղադրված է 4 ֆերմերների այգետարածքներում³
 - 500 քմ, գ. Լեհվազ, Կ. Կարապետյան, տնկարան;
 - 5 000 քմ, գ. Շվանիձոր, Հ. Օհանյան, խաղողի այգի;

² - Ոռոգման տարբեր եղանակները ներկայացված են Հավելված 2-ում:
³ - Markets for Meghri project: <http://www.shen.am/?pageid=meghri>

- 40 000քմ, գ. Ալվանք /Արաքսամերձ տարածք/, Ա. Հովհաննիսյան, ծիրանի այգի;
- 150 քմ, ք. Մեղրի, Ն. Մուրադյան, տնկարան:

Տվյալ ոռոգման համակարգը շատ չի տարածվել հետևյալ պատճառներով՝

- Արաքս և Մեղրի գետերի, ինչպես նաև խորքային հորերի ջուրը պարունակում է խոշոր մասնիկներ, որոնք խցանում են ֆիլտրերը և խողովակները և համակարգն արագ շարքից դուս է գալիս և սպասարկման կարիք ունի, ինչը հանգեցնում է լրացուցիչ ծախսերի,
- Դեռևս զգացվում է ոռոգման ջրի խիստ պահանջ, հետևաբար խնայողության կարիք չի զգացվել: Ֆերմերները չեն ցանկանում ներդրումներ անեն:

Աղյուսակ 10.4

Մշակաբույս	Խողովակա-ակոսային	Կաթիլային
Թուզ	5-15%	60-85%
Արքայանարինջ	5-10%	50-75%
Նուռ	5-15%	60-85%
Խաղող	5-15%	50-75%

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ջրի խնայողությունը խիստ փոխկապակցված է մշակաբույսի ջրի պահանջից, հողի կառուցվածքից (կավային, կավա-ավազային, ավազային և այլ.), ինչպես նաև եղանակային պայմաններից:

Մեղրիի Ալվանք և Շվանիձոր համայնքներում առկա են հին ոռոգման և խմելու ջրի ջրատար համակարգեր՝ ստորգետնյա թունելներ (քարիզներ), Ալվանքում՝ մոտ 1500 մ, իսկ Շվանիձորում՝ մոտ 1200 մ երկարությամբ: Դրանք բաղկացած են թունել-ջրատարերից և հորերից, որոնք նախատեսված են համակարգը սպասարկելու համար: Համակարգի մեջ ջուրը մտնում է լեռնային աղբյուրներից: Տեղի բնակիչները դրանք օգտագործում են և ոռոգման, և խմելու ջրի ստացման նպատակով: Ցանցի ընդլայնման դեպքում կարելի է նպաստել ոռոգման խնդրի մասնակի լուծմանը: Տվյալ նկարի վրա պատկերված է Շվանիձորի քարիզի ջրհորերից մեկը:



ԻՆՏԵՆՍԻՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՑԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Տվյալ կենտրոնների հիմնադրման տարբերակներից մեկն օրինակ գյուղացիական կոպերատիվների գաղափարն է՝ պետության մասնակցությամբ, որոնք օրինակ 3 տարի հետո ամբողջությամբ կհանձնվեն շահագրգիռ գյուղական համայնքներին: Տվյալ կենտրոնների հիմնական առաքելությունը լինելու է *ֆերմերային և գյուղացիական տնտեսություններին, ինչ-*

պես նաև առանձնատնտես գյուղացիներին խորհրդատվական, մասնագիտական և ուսուցողական ծառայությունների մատուցումը՝ տարածաշրջանում արդի ինտենսիվ գյուղատնտեսության վարման հայտնի մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման տեսակետից:

Տվյալ կենտրոնների առջև դրված խնդիրները հիմնականում հետևյալն են.

- Զանազան ագրոմեխանիզացիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների առումով կառավարման հմտությունների ուսուցումը/փորձի փոխանցումը տնտեսվարողներին:
- Աջակցություն տնտեսվարողներին՝ ստացվող բարցրարժեք արտադրանքի/բերքի տեսակավորման, փաթեթավորման (եթե կիրառելի է), նոր արժեքի (value-added) ստեղծման, պահեստավորման և տեղափոխման համակարգերի ձևավորման գործում, ինչպես նաև արտադրանքի որակի չափանիշները խստորեն պահպանելու մշակույթի սերմանումը՝ նամանավանդ հավանական արտահանման հեռանկարի տեսակետից:
- Բնական ջրային պաշարների կառավարման և հմտությունների (զանազան ջրօգտագործման արդյունավետ տեխնոլոգիաների՝ մասնավորապես կաթիլային ոռոգման, անձրևացման, ջրակուտակման, և այլն) ուսուցանումը շահագրգիռ համայնքներին:
- Հնարավորության դեպքում կայուն ջրօգտագործման կառավարման պլանավորումը և կիրառական խորհրդատվությունը շահագրգիռ տնտեսվարողներին:

Ընդհանուր առմամբ՝ հաշվի առնելով նաև ինֆրակառուցվածքային ներդրումների բլոկը, տվյալ ծրագրի իրականացման համար պահանջվում է մոտ 6,5 մլրդ դրամի ներդրում:

ՇՈՒԿԱ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Աղյուսակ 10.5

Մարզի գյուղատնտեսական արտադրության համախառն բերքի ծավալներն ըստ տարիների, հզ. տ.

Գյուղատնտեսական մշակաբույսի անվանումը/խումբը	2007	2008	2009	2010	2011
1 Կարտոֆիլ	31.3	33.3	32.4	23.6	27.6
2 Բանջարա/բոստանային	16.7	17.9	17.5	15.1	15.8
3 Պտուղ և հատապտուղ	19.7	20.0	13.8	3.0	11.6
4 Խաղող	1.3	1.0	1.0	0.9	0.9

Այսպիսով, տվյալ ծրագրի իրականացման արդյունքում ստեղծված ջրամատակարարման համակարգից կօգտվի ոչ միայն սույն ծրագրով նախատեսվող Ներդրողների Միավորումը, այլև կօգտվի Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի ինչպես առանձին գյուղացիական տնտեսություններ, այնպես էլ գյուղացիական ֆերմերային տնտեսություններ և գյուղական համայնքների բնակիչներ:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ինչպես արդեն վերը նշվել է, պետության՝ ՀՀ Կառավարության՝ ի դեմս Սյունիքի մարզպետարանի, մասնակցությունը տվյալ ծրագրի իրականացմանը ինֆրակառուցվածքին բնութի է. սա ենթադրում է անհրաժեշտ ինֆրակառուցվածքի՝ Մեղրի ոռոգման ինքնահոս համակարգի կառուցումը, որով Սյունիքի մարզի Մեղրիի ենթատարածաշրջանի շուրջ 682 հա հողատարածքներ, այդ թվում նաև 8 պոմպակայաններով ոռոգվող 632 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով: Բացի այդ, պետությունը իր վրա է վերցնում “մայր խողովակաշարից” դեպի համայնքներ/նպատակային հողատարածքներ մանր խողովակաշարային ցանցի կառուցման աշխատանքները՝ խթանելու և անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու ինտենսիվ գյուղատնտեսության ներդրման և/կամ զարգացման, ինչպես նաև խաղողի այգիների վերակենդանացման համար: Ըստ նախնական հաշվարկների, սա կարժենա մոտ 6,150 մլն դրամ:

Պետության չափաբաժինը ներդրումների ամբողջ ծավալում իրենից ներկայացնում է ինֆրակառուցվածքային ներդրումների բոլորի՝ Մեղրիի ինքնահոս ոռոգման մայր և ցանցային բաժանարար խողովակային համակարգերի, կառուցումը՝ 6 150 մլն դրամ արժողությամբ:

Մասնավոր ներդրողը իրականացնելու է 272 445 700 դրամի ներդրում (հողերի ձեռքբերում, ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում և մոնտաժում, ծառերի և տնկիների ձեռքբերում, և այլն):

Ըստ իրականացման ուղղությունների, ներդրումների բաշխվածքն ունի հետևյալ տեսքը.

1. **Հող, շենքեր/շինություններ և/կամ շենքային պայմանների բարելավում** - Մեղրիի տարածաշրջանի համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի 1 հա-ի կադաստրային միջինացված արժեքները հետևյալն են (հազ. դրամ).

Աղյուսակ 10.6

N	Համայնքի անվանումը	Վարելահող		Բազմամյա տնկարկ		
		Զրովի	Անջրտի	Խաղող	Կորիզավոր	Հնդավոր
1	Մեղրի	762.5	302.5	1952.5	1280.0	-
2	Ագարակ	1107.5	297.5	2510.0	-	1475.0
3	Ալվանք	895.0	300.0	1440.0	1360.0	877.5
4	Գուղենիս	710.0	450.0	-	-	1977.5
5	Լեհվազ	1032.5	352.5	1350.0	1150.0	827.5
6	Կարճևան	707.5	353.8	1617.5	1505.0	1375.0
7	Կուրիս	685.0	532.5	2510.0	-	1435.0
8	Նոնաձոր	967.5	252.5	1185.0	625.0	-
9	Շվանիձոր	970.0	350.0	1840.0	915.0	1060.0
10	Վահրավար	727.5	340.0	1395.0	947.5	-
11	Վարդանիձոր	787.5	312.5	1417.5	655.0	-

Մեղրու տարածաշրջանում գյուղատնտեսական նշանակության ոռոգելի, սակայն չոռոգվող հողերն ունեն հետևյալ պատկերը.

Աղյուսակ 10.7

Հ	Համայնքի անվանումը	Չոռոգվող վարելահողերի չափը /հա/	Պատկանելիությունը
1	Մեղրի	25.0	մասնավոր սեփականություն
2	Ագարակ	20.0	մասնավոր սեփականություն
3	Ալվանք	47.0	համայնքային սեփականություն
4	Լեհվազ	25.0	10 հա համայնքային, 15 հա մասնավոր
5	Կարճևան	45.0	5 հա համայնքային, 40 հա մասնավոր
6	Կուրիս	10.0	5 հա համայնքային, 5 հա մասնավոր
7	Նոնաձոր	11.5	մասնավոր սեփականություն
8	Շվանիձոր	5.0	համայնքային սեփականություն
9	Վահրավար	8.0	3 հա համայնքային, 5 հա մասնավոր
10	Վարդանիձոր	17.0	4 հա համայնքային, 13 հա մասնավոր

Այսպիսով, տարածաշրջանում այս պահի դրությամբ առկա է 213,5 հա չոռոգվող գյուղատնտեսական նշանակության հող: Հիմք ընդունելով վերը նշված տեղեկատվությունը կարելի է եզրակացնել, որ ծրագրի Ներդրողների Միավորումը հողերի ձեռքբերման վրա կծախսի 74 725 000 դրամ:

2. Ինֆրակառուցվածքի ստեղծում/արդիականացում. Բուն “մայր” ոռոգման խողովակատարի (ներառյալ դեպի Ագարակ ձգվող ճյուղը)՝ 53-55 հզ մետր երկարությամբ, նաև ցանցային բաժանարար խողովակային համակարգի կառուցումը (տարածաշրջանի թվով 10 համայնքներում՝ մոտ 40,000 մետր ընդհանուր երկարությամբ) կառուցման ամբողջ ծրագրի արժեքը գնահատվում է մոտ 6 150 մլն դրամ:

3. Ինտենսիվ գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ ձեռքբերվող սարքավորումներ (մեկ հա կտրվածքով). այստեղ իմաստ ունի նկարագրել միայն այն ոռոգման եղանակների ներդրման հետ կապված ծախսերը, որոնք կարող են զարգանալ Մեդրիի տարածաշրջանում: Դրանք են՝ ակոսային, խողովակա-ակոսային և կաթիլային ոռոգման եղանակները:

Ստորև բերված աղուսյակներում ներկայացված են միավոր մակերեսի /1 000 քմ՝ 25*40մ/ կտրվածքով յուրաքանչյուր ոռոգման համակարգ ներդնելու հաշվարկները.

Ակոսային

Աղյուսակ 10.8

Մշակարույս	Ծառեր	Մելիորացիա ⁴	Ակոսահանում	Ընդամենը
Թուզ	40	100 000	20 000	120 000
Արքայանարինջ	40	100 000	20 000	120 000
Նուռ	80	100 000	40 000	140 000

Ընդամենը՝ 120 000 – 140 000 ՀՀ դրամ, հաշվի առնելով մելիորացիան, որը սովորաբար ա- նում են մեկ անգամ և եթե հողն արդեն հարթեցված և տեղաձևված է, ապա կարելի է ընդու- նել միայն ակոսահանման 20 000 – 40 000 ՀՀ դրամ որպես ներդրումային ծախս ակոսային եղանակով ոռոգման համակարգի համար:

Խողովակա-ակոսային

Աղյուսակ 10.9

Մշակարույս	Ծառեր	Մելիորացիա	Ակոսահանում	Խողովակներ	Ընդամենը
Թուզ	40	100 000	20 000	25 000	145 000
Արքայանարինջ	40	100 000	20 000	25 000	145 000
Նուռ	80	100 000	40 000	25 000	165 000

Ընդամենը 145 000 – 165 000 ՀՀ դրամ, հաշվի առնելով մելիորացիան, որը սովորաբար ա- նում են մեկ անգամ և եթե հողը արդեն հարթեցված և տեղաձևված է, ապա կարելի է ընդու- նել միայն ակոսահանման 45 000 – 65 000 ՀՀ դրամ որպես ներդրումային ծախս ակոսային եղանակով ոռոգման համակարգի համար:

Կաթիլային

Աղյուսակ 10.10

Մշակ արույս	Խողովակներ	Կաթո- ցիկներ	Ֆիլտր	Ռեզեր-վուար	Պոմ փ	Աշխատանք	Ընդամենը
Թուզ	27080	16000	15000	100000	20000	24000	202 080
Արքայա- նարինջ	27080	16000	15000	100000	20000	24000	202 080
Նուռ	39080	32000	15000	100000	20000	48000	254 080

Ինչպես երևում է աղյուսակից, կաթիլային համակարգի ներդրման ծախսը 1 000 ք.մ. այգու համար կտրականապես տարբերվում է վերը նշված եղանակներից:

⁴ - Մելիորացիան /հողի հարթեցում և տեղաձևում/ կատարվում է մեկ անգամ, երբ ակոսահանումը՝ տարին մեկ: Ծառայության արժեքը բերված է մոտավոր միջին՝ այն կաղված է հողի ռելիեֆից և որակից /կավային, ավազային, փխրեցված և այլն./, սովորաբար հողային ծառայությունների արժեքները հաշվարկվում են ըստ աշխատաց ժամանակի:

Այսպիսով, մեկ հեկտարի կտրվածքով ինտենսիվ գյուղատնտեսության ներդրման համար անհրաժեշտ սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար (կաթիլային ոռոգման դեպքում՝ անցքային և տափակ էմիտերներով ժապավեններ, այգու բազմամյա խողովակներ; ավտոմատացված ոռոգման դեպքում՝ զանազան էլեկտրամագնիսային փականներ և հարակից արքեսուարներ, կոնտրոլերներ, ֆորսունկաներ, փոշիացուցիչներ, ռոտորներ, կաթիլային խողովակներ, անձրևի դատչիկներ; և այլն)՝ ըստ վերը ներկայացված հաշվարկների և կատարված միջազգային ուսումնասիրությունների, պահանջվում է միջինը մոտ 160 000 դրամ:

Տվյալ ծրագրի շրջանակներում այս պահի դրությամբ միայն անջրտի կարգավիճակով ընդամենը առկա է 213,5 հա տարածք: Ընդամենը տվյալ հողվածով ներդրումները կկազմեն 34 160 000 դրամ:

4. Ծառերի/տնկարկների ձեռքբերում.

Նախքան ծառերի/տնկիների կտրվածքով կատարվելիք ներդրումներին, անդրադառնանք ըստ համայնքների թիրախային մշակաբույսերին: Սրա մասին պատկերացում է տալիս ստորև բերված աղուսյակը.

Աղյուսակ 10.11

N	Համայնքի անվանումը	Չոռոգվող վարելահողերի չափը /հա/	Թիրախային մշակաբույսեր	Արքայանարին ջ	Նուռ	Թուզ	Խաղող
1	Մեղրի	25.0	Արքայանարին ջ, նուռ, թուզ	8.33	8.33	8.33	
2	Ագարակ	20.0	Արքայանարին ջ, նուռ, թուզ, խաղող	5	5	5	5
3	Ալվանք	47.0	Արքայանարին ջ, նուռ, թուզ, խաղող	11.75	11.75	11.75	11.75
4	Գուդեմնիս	0.0					
5	Լեհվազ	25.0	Արքայանարին ջ	25			
6	Կարճևան	45.0	Արքայանարին ջ, նուռ, թուզ	15	15	15	
7	Կուրիս	10.0	Արքայանարին ջ	10			
8	Նյուվաղի	11.5	Նուռ, խաղող		5.75		5.75
9	Շվանիձոր	5.0	Արքայանարին ջ, նուռ, թուզ, խաղող	1.25	1.25	1.25	1.25
10	Վահրավար	8.0	Արքայանարին ջ	8			
11	Վարդանիձոր	17.0	Արքայանարին ջ	17			
	Ընդամենը՝	213,5		101,33	47,08	41,33	23,75

Արքայանարինջ – ըստ փորձագիտական եզրակացությունների և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունների 1 հա կտրվածքով անհրաժեշտ է 100 տնկի՝ յուրաքանչյուրը 3 000 - 5 000 դրամ արժողությամբ (կախված տեսակից և բերքատվությունից): Այստեղից էլ, 101,33 հա տարածքի կտրվածքով անհրաժեշտ է $(101,33 \times 100 \times 5000 =)$ 50 665 000 դրամ:

Նուռ - ըստ փորձագիտական եզրակացությունների և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունների 1 հա կտրվածքով անհրաժեշտ է 200 տնկի՝ յուրաքանչյուրը 2 500 - 4 000 դրամ արժողությամբ (կախված տեսակից և բերքատվությունից): Այստեղից էլ, 47,08 հա տարածքի կտրվածքով անհրաժեշտ է $(47,08 \times 200 \times 4000 =)$ 37 664 000 դրամ:

Թուզ - ըստ փորձագիտական եզրակացությունների և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունների 1 հա կտրվածքով անհրաժեշտ է 60 տնկի՝ յուրաքանչյուրը 2 500 - 4 000 դրամ արժողությամբ (կախված տեսակից և բերքատվությունից): Այստեղից էլ, 41,33 հա տարածքի կտրվածքով անհրաժեշտ է $(41,33 \times 60 \times 4000 =)$ 9 919 200 դրամ:

Խաղող - ըստ փորձագիտական եզրակացությունների և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունների 1 հա կտրվածքով անհրաժեշտ է 1100 տնկի՝ յուրաքանչյուրը 1 500 - 2 500 դրամ արժողությամբ (կախված տեսակից և բերքատվությունից): Այստեղից էլ, 23,75 հա տարածքի կտրվածքով անհրաժեշտ է $(23,75 \times 1,100 \times 2,500 =)$ 65 312 500 դրամ:

Այսպիսով, ծառերի/տնկիների ձեռքբերման կտրվածքով անհրաժեշտ է 163 560 700 դրամ ներդրում:

ԱՇԽԱՏՈՒԺ ԵՎ ՀՈՒՄՔ

Ինտենսիվ գյուղատնտեսության վարելու ընթացքում անհրաժեշտ աշխատուժի ներգրավման հետ կապված միջինացված ծախսերի բաշխվածքն ունի հետևյալ տեսքը (1 000 ք.մ. հաշվով).

Աղյուսակ 10.11

Աշխատանքի անվանումը	Քանակը	Գինը	Ընդամենը
Էտում և կտրատած ճյուղերի հեռացում	1	20,000	20,000
Ակոսների և ծառերի բների փոսերի նախապատրաստում	1	20,000	20,000
Ծառերի բների սպիտակեցում	3	3,500	10,500
Պարարտացում	1	15,000	15,000
Սրսկում	5	4 000	20,000
Խոտի հնձում, տուկի պատրաստում և տեղափոխում	1	33,600	33,600
Բերքի հսկողություն (պահակ)	1	60,000	60,000
Ոռոգում (որպես աշխատանք)	20	3 000	60 000
Այլ ծախսեր	1	15,000	15,000
ԸՆԴԱՄԵՆԸ՝			254,100

Տվյալ կենտրոնների աշխատակիցների վարձատրությանը ուղղվող ծախսերի բաշխվածքը ամսական կտրվածքով ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 10.12

Աշխատավարձի հաշվարկ	Թվաքանակ	Աշխատավարձ	Ընդամենը
Ղեկավար անձնակազմ	4	200,000	800,000
Տեղացի մասնագետներ	8	120,000	960,000
ԸՆԴԱՄԵՆԸ՝			1,760,000

Տվյալ կենտրոնների՝ օտարերկրացի հրավիրյալ մասնագետների վարձատրությանը ուղղվող ծախսերի բաշխվածքը տարեկան կտրվածքով ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 10.13

Ծախսի նպատակը	Թվաքանակ	Աշխատավարձ	Ընդամենը (տարեկան)
Աշխատավարձ	2	13,770,000	27,540,000
Օրապահիկ	2	6,885,000	13,770,000
Թոփք	8	765,000	6,120,000
Հյուրանոց	2	4,590,000	9,180,000
ԸՆԴԱՄԵՆԸ՝			56,610,000

ՀՈՒՄՔ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ

Ծրագրի ապագա կենսագործունեության հաջողության լուրջ գրավական է հանդիսանում սարքավորումների և պահեստամասերի մատչելիությունը՝ ինչպես գնային, այնպես էլ շուկայի հասանելիության առումներով: ՀՀ տարածքում առկա է կաթիլային ոռոգման համակարգերի առնվազն մեկ արտադրություն, որը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Վեդի քաղաքում: Կազմակերպությունը արտադրում և վաճառում է կաթիլային համակարգի խողովակներ՝ 15 մմ տրամագծով 1 մետրը՝ 80 - 100 ՀՀ դրամ (նախատեսված բաց գրունտի համար): Համակարգի համալրող մասերի/սարքերի (ֆիլտրեր, ջրի տարաներ, կաթոցիկներ և այլ մասեր) արտադրություն ՀՀ-ում դեռևս չկա, սակայն հաշվի առնելով ներկայիս միտումները, կարելի է հավաստիաբար եզրակացնել, որ նման սարքերը/մասերը ունեն պահանջարկ և դրանց տեղական արտադրությունը կարող է դառնալ արդյունավետ բիզնես: Այս՝ կոմպլեկտավորող սարքերի տեսակետից շեշտադրումը կատարվել է ԱՊՀ՝ հիմնականում Ռուսաստանի և Ուկրաինայի շուկաների վրա, թեպետ հարկ է հատուկ նշել որ այնտեղ էլ անհրաժեշտ սարքերն ու սարքավորումները ներմուծվում են եվրոպական շուկաներից:

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Սարերի լանջերին ընկած հողերը ևս կդառնան մշակովի, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա արքայանարինջի, նռան և թուզի կուլտիվացման համար: Հատուկ պետք է շեշտել, որ մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգերի անխափան աշխատանքն է:

Մարզի 43 846 հա վարելահողերից ոռոգվում են 6 880 հա-ը որը խիստ ազդում է գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և հողի մշակության արդյունավետության բարձրացման վրա:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը չեն մշակվում հիմնականում ոռոգման հնարավորությունների բացակայության պատճառով, ընդ որում, մարզի գյուղատնտեսության ոլորտում առանձնացված հիմնախնդիրների շարքում ոռոգման ցանցի և պայմանների անբավարարությունը զբաղեցնում է 2-րդ տեղը:

ՌԻՍԿԵՐ և ՎՏԱՆԳՆԵՐ

- Վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առաջացում;
- պետական ոչ բարենպաստ քաղաքականություն;
- գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկայնության, տվյալ ոլորտի ապահովագրական համակարգի բացակայության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հետ կապված խնդիրների պատճառով ջրօգտագործողների ընկերություններին վերապահված՝ երկրորդական և երրորդական ոռոգման համակարգերի շահագործման և պահպանման գործառույթի վտանգում՝ կապված տարածամկետ վարձավճարների վճարման խնդիրների հետ;
- ՀՀ կառավարության կողմից ընդունված “Ոռոգման համակարգի բարեփոխումներ” ծրագրով նախատեսված ոռոգման համակարգի կառավարման մասնակցային սկզբունքի վտանգում՝ կապված ջրօգտագործող տնտեսությունների պասիվության և բոյկոտի հետ; հավանական երաշտի պատճառով տարածամկետ վարձավճարների վճարման խնդիրներ; գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների սակավության/բացակայության, ինչպես նաև վարկային (փոխառու) միջոցների սղության/անմատչելիության պատճառով ջրօգտագործման ընկերությունների բնականոն կենսագործունեության խափանում; ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վատ որակի պատճառով ջրագծերի և ջրամբարների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով մատչելիության դժվարություն, ինչպես նաև այդ նպատակով մեկնող սեփական տեխնիկայի շարքից դուրս գալը/վնասումը;
- գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, գյուղատնտեսական արտադրության մասնատվածության, և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման համար վերոհիշյալ տնտեսությունների սակավ հնարավորությունների և դրա իրականացմամբ զբաղվող կառույցների գրեթե բացակայության հետևանքով մթերման համար անհրաժեշտ պտղի սակավություն և որպես հետևանք՝ տարածամկետ վարձավճարների վճարման հետ կապված խնդիրների առաջացում; մարզում առկա սահմանամերձ գյուղատնտեսական հողերի առկայության պատճառով ջրագծերի և ջրամբարների, ինչպես նաև օժանդակ տեխնիկայի՝ թշնամական գործողությունների հետևանքով վնասման հավանականություն:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՍՓՈԱԳԻՐ

Ստորև ամփոփված են ներկայացված ծրագրերի տնտեսական ազդեցության ամփոփ գնահատականները՝ հետևյալ հարթություններում.

ԱՇԽԱՏՈՒԺ

- Հիմնական աշխատատեղերի թվաքանակ
- Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ
- Աշխատավարձի ֆոնդ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՅՈՒՆՔ՝ ՄԻԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՎ

- Համախառն հասույթ
- Շահույթ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՅՈՒՆՔ՝ ՄԱԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՎ

- Սկզբնական ներդրումներ
- Սարգի ՀՆԱ-ի մեջ ներդրում
- Հարկեր

ԱՇԽԱՏՈՒԺ

Հիմնական աշխատատեղերի թվաքանակ

- Ծրագրերի հաջող իրագործման պարագայում ներդրումների կատարումից հետո առաջին տարում կստեղծվի 978 աշխատատեղ, իսկ լավատեսական սցենարի իրագործման դեպքում ստեղծվող աշխատատեղերի թիվը կհասնի 2,067-ի:
- Ծրագրերի իրականացման վերջին՝ 10-րդ տարում ըստ հիմնական սցենարի կստեղծվի 1,407 հիմնական աշխատատեղ, ինչը լավատեսական զարգացումների դեպքում կկազմի 2,756 հիմնական աշխատատեղ:
- Հիմնական սցենարի իրագործման դեպքում ստեղծվող հիմնական աշխատատեղերի միջին տարեկան թիվը կկազմի 1,192, իսկ լավատեսական սցենարի դեպքում այդ թիվը կհասնի 2,412 -ի:

Ժամանակավոր/սեզոնային աշխատողներ

- Ըստ հիմնական սցենարի ներդրումների կատարումից հետո առաջին տարում ժամանակավոր/սեզոնային աշխատողների թիվը կկազմի 33 մարդ, իսկ լավատեսական սցենարի իրագործման պարագայում, համապատասխանաբար՝ 577 մարդ:

- Ծրագրերի իրականացման վերջին՝ 10-րդ տարում, համաձայն հիմնական սցենարի, ժամանակավոր/սեզոնային աշխատողների թիվը կկազմի 64, իսկ նրանց միջին տարեկան թիվը՝ 49: Իսկ լավատեսական զարգացումների դեպքում գնահատվում է, որ այս թվերը կկազմեն, համապատասխանաբար, 1,129 մարդ և 853 մարդ:

Աշխատավարձի ֆոնդ

- Ներդրումների կատարումից հետո առաջին տարում ծրագրերի իրականացման հիմնական սցենարով գնահատվում է 1.59 մլրդ. դրամի աշխատավարձի ֆոնդ, որը լավատեսական սցենարի պարագայում կկազմի 2.64 մլրդ. դրամ:
- Ծրագրերի ավարտի վերջին՝ 10-րդ տարում աշխատավարձի ֆոնդը կկազմի 2.69 մլրդ. դրամ: Սա այն դեպքում էթե իրագործվի հիմնական սցենարը: Իսկ եթե իրադարձություններն ընթանան լավատեսական սցենարով, ապա այս ցուցանիշը կկազմի 6.88 մլրդ. դրամ:
- Գնահատվում է նաև, որ աշխատավարձի ֆոնդի միջինացված տարեկան մեծությունն ըստ ծրագրերի իրագործման հիմնական սցենարի կկազմի 2.14 մլրդ դրամ, կամ լավատեսական զարգացումների պարագայում՝ 4.76 մլրդ դրամ: Ծրագրերի իրականացման ամբողջ ընթացքում աշխատավարձի ֆոնդը համաձայն հիմնական սցենարի կկազմի 30.77 մլրդ. դրամ, իսկ լավատեսական սցենարի պարագայում՝ 43.72 մլրդ. դրամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ - ՄԻԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Համախառն հասույթ

- Հիմնական սցենարի իրագործման դեպքում ներդրումների կատարելուց հետո առաջին տարում ըստ գնահատականների կապահովվի 3.62 մլրդ. դրամի համախառն հասույթ, իսկ լավատեսական սցենարի դեպքում դա կկազմի 6.19 մլրդ. դրամ:
- Ծրագրերի իրագործման վերջին՝ 10-րդ տարում համախառն հասույթի հիմնական սցենարով գնահատված մեծությունը կկազմի 11.35 մլրդ. դրամ, իսկ լավատեսական սցենարով գնահատվածը՝ 17.55 մլրդ. դրամ:
- Իսկ ինչ վերաբերում է միջին տարեկան հասույթին և ամբողջ ծրագրերի ընթացքում ընդհանուր հասույթին, ապա հիմնական սցենարով դրանց գնահատականները կկազմեն, համապատասխանաբար, 7.48 մլրդ և 139.29 մլրդ դրամ, իսկ լավատեսական զարգացումների պարագայում, համապատասխանաբար, 11.87 մլրդ և 234.56 մլրդ դրամ:

Շահույթ

- Ներդրումների կատարումից հետո առաջին տարում ծրագրերի իրականացման հիմնական սցենարով գնահատվում է 518.98 մլն. դրամի վնաս: Նույնիսկ լավատեսական սցենարի իրագործման պարագայում ներդրումների կատարումից հետո առաջին տարում կանխատեսվում է բացասական շահույթ՝ վնաս, որը կկազմի 945.83 մլն. դրամ:
- Ծրագրերի վերջին՝ 10-րդ տարում հիմնական սցենարով կանխատեսվող շահույթը կկազմի 2.5 մլրդ. դրամ, իսկ միջին տարեկան շահույթը՝ 988.52 մլն. դրամ: Ինչ վերաբերում է լավատեսական սցենարով այս երկու ցուցանիշների մեծությունների գնահատմանը, ապա դրանք կկազմեն, համապատասխանաբար, 8.35 մլրդ դրամ և 3.7 մլրդ դրամ:
- Ամբողջ ծրագրերի ընթացքում ընդհանուր շահույթը հիմնական սցենարի իրագործման դեպքում կկազմի 30.51 մլրդ. դրամ, իսկ լավատեսական զարգացումների դեպքում՝ 37.77 մլրդ դրամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ - ՄԱԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Սկզբնական ներդրումներ

Ծրագրերի իրականացման հիմնական սցենարի իրագործման դեպքում ներդրումներ կատարելուց հետո առաջին տարում սկզբնական ներդրումների ծավալը գնահատվում է 4.05 մլրդ. դրամ, որից 3.03 մլրդ.-ը կկազմեն տեղական (հայաստանյան) գնումները: Իսկ եթե իրադարձություններն ընթանան լավատեսական սցենարի համաձայն, ապա կանխատեսվում է, որ սկզբնական ներդրումները կկազմեն 7.57 մլրդ. դրամ, որից մոտ 6 մլրդ. դրամը բաժին կհասնի տեղական գնումներին:

Մարզի ՀՆԱ-ի մեջ ներդրում

- Ներդրումների կատարումից հետո առաջին տարում ծրագրերի իրականացման հիմնական սցենարի համաձայն մարզի ՀՆԱ-ի մեջ ներդրումն արժեքային արտահայտությամբ գնահատվում է 361.78 մլն. դրամ, իսկ լավատեսական սցենարով այդ ներդրումը համարժեք կլինի 928.36 մլն. դրամի:
- Ծրագրերի վերջին՝ 10-րդ տարում մարզի ՀՆԱ-ի մեջ ներդրումը ըստ հիմնական սցենարի կկազմի 1.13 մլրդ դրամ իսկ տարեկան միջինը՝ 748.36 մլրդ.: Լավատեսական զարգացումների դեպքում այս ցուցանիշները, համապատասխանաբար, կկազմեն 2.63 մլրդ. և 1.78 մլրդ. դրամ:

- Ամբողջ ծրագրերի ընթացքում մարզի ՀՆԱ-ի մեջ ընդհանուր ներդրումը ըստ հիմնական սցենարի համարժեք կլինի 13.93 մլրդ. դրամի, իսկ լավատեսական սցենարի դեպքում՝ 35.18 մլրդ. դրամի:

Հարկեր

- Հիմնական սցենարի իրագործման պարագայում ներդրումների կատարումից հետո առաջին տարում 456.38 մլն. դրամի հարկեր, որից 8%-ը կկազմեն անուղղակի հարկերի գծով վճարումները, 5%-ը շահութահարկի գծով, իսկ 87%-ը եկամտահարկի գծով վճարումները: Լավատեսական սցենարի իրագործման դեպքում գնահատվում է, որ ներդրումների կատարումից հետո առաջին տարում վճարվելիք հարկերը կկազմեն 781.01 մլն. դրամ, որից 12%-ը անուղղակի հարկերի մասնաբաժինն է, 4%-ը՝ շահութահարկի, իսկ 84%-ը՝ եկամտահարկի մասնաբաժինը:
- Ըստ հիմնական սցենարի, ծրագրերի իրականացման վերջին՝ 10-րդ տարում վճարվելիք հարկերը կհասնեն 1.29 մլրդ դրամի, որից 9%-ը՝ անուղղակի հարկեր, 39%-ը՝ շահութահարկ, 52%-ը՝ եկամտահարկ: Իսկ ըստ լավատեսական սցենարի այդ նույն՝ 10-րդ տարում հարկերը կկազմեն 3.65 մլրդ. դրամ, որից՝ 7%-ը՝ անուղղակի հարկեր, 46%-ը՝ շահութահարկ, 47%-ը՝ եկամտահարկ:
- Եթե իրադարձություններն ընթանան հիմնական սցենարով, ապա գնահատվում է, որ միջին տարեկան հարկային վճարումները կկազմեն 871.19 մլն. դրամ, որից 9%-ը՝ անուղղակի հարկերի գծով, 30%-ը՝ շահութահարկի գծով, 61%-ը՝ եկամտահարկի գծով վճարումներ: Լավատեսական զարգացումների դեպքում միջին տարեկան հարկերը կկազմեն 2.22 մլրդ դրամ, որից 8%-ը՝ անուղղակի հարկեր, 38%-ը՝ շահութահարկ, 54%-ը՝ եկամտահարկ:
- Ինչ վերաբերում է ծրագրերի ամբողջ ընթացքում վճարվելիք հարկերի չափին, ապա համաձայն հիմնական սցենարի դրանք կկազմեն 15.18 մլրդ դրամ (9%-ը՝ անուղղակի հարկեր, 40%-ը՝ շահութահարկ, 51%-ը՝ եկամտահարկ), իսկ համաձայն լավատեսական սցենարի՝ մոտ 22 մլրդ. դրամ (16%-ը՝ անուղղակի հարկեր, 34%-ը՝ շահութահարկ, 50%-ը՝ եկամտահարկ):



Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակ
Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա.Մանուկյան 1/60

Հեռ.՝ +374 285 20040
E-mail: yerevan-am@osce.org